Բ. ՏԱՐԻ ԹԻՒ 478 — ԵՐԵՔՇԱԲԹԻ 6 ՕԳՈՍՏՈՍ 1885 — (Ն. Տ.) 18 ՕԳՈՍՏՈՍ 1885 — 8 ԶԻԼԳԱՏԷ 1302

40 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան
غلطه‌ده نورادونکیان خاننده آرهولك
غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

Les annonces sont reçues a l'EASTERN AGENCY,
Karakeuy, Déirmén han

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

40 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար Տարեկան	դահեկան արծաթ	200
» » Վեցամսեայ	» »	100
» » Եռամսեայ	» »	50
Գաւառաց » և տեղական Թղթատարով տարեկան	» »	240
Գաւառաց համար և տեղական Թղթատարով վեցամսեայ	» »	120
Օտար երկիրներ, տարեկան	Ֆրանք	28
» » վեցամսեայ	»	56

Դուրս ղրկուած լրագրաց ծանրու ծախքը Տնօրէնութեան վրայ է, խմբագրութեան ղրկուած ոեւէ նամակ կամ գրութիւն ետ չ'տրուիր։

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ Կ'ԸՆԴՈՒՆՈՒԻՆ
ԻՍԹԸՐՆ ԷՃԷՆՍԻ
Գործակալութեան ձեռամբ, Գարաքէօյ, Տէյիրմէն խան

Կ. ՊՈԼԻՍ
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 5 ՕԳՈՍՏՈՍ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱԿԱՐ Ա.
ՀԱՍՏԱՏԵԱԼ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ

Բնականաբար գժգոհ ենք։ Ռուսիոյ Կայսրը, չգիտենք ինչպիսի նկատումներով, անտես բրաւ Ազգին Ընտրեալն, և Կաթողիկոս հաստատեց երկրորդ ընտրեալը, կամ [illegible]։ Մեք նախ գժգոհ ենք ազգային մեծամասնութեան կամաց ու բաղձանաց այսպէս ոտնակոխ լինելուն համար։ Մեք նաև գժգոհ ենք, զի Աղեքսանդր Գ. Կայսրն յեղաշրջեց իւր հօր և մեծ-հօր մէկ շատ իմաստուն սովորութիւնն, որք միշտ հաստատած էին Ազգին առաջին ընտրեալը։ Կրնանք բսել թէ Աղեքսանդր Գ. այսպէս կարեւոր առանձնաշնորհումէ մը զրկեց հայ ժողովուրդն, որ եթէ Պոլաժենիոյ մէջ ցաւօք որոշ կը տեսնէր իւր ազգային ընտրութեան գրուած պէս պէս սեղմումներ, գէթ ուրախ էր որ Ռուսիոյ Վեհապետք վեհանձնօրէն կը յարգէին ազգային մեծամասնութեան ընտրութեան արդիւնքը։ Մեք գժգոհ ենք նաև, զի Կաթողիկոս հաստատեց այնպիսի եպիսկոպոս մը, որ թէպէտ անձնական շատ բարի հանգամանքներ կրնայ ունեցած լինել որք անծանօթ են մեզ, սակայն այսպէս բնաւ չեր վայելեր ժողովրդականութիւն, վստահութիւն և համակրանք չեր ազդեր հայ ժողովրդեան։ Վերջապէս, մեք գժգոհ ենք, զի ազգային երկարժամանակեայ խորհուրդներէ, ջանքերէ և աշխատութիւններէ յետոյ, կաթողիկոսական ընտրութեան գործը կը վերջանայ Պետական հարուածով մը։

Այս Պետական հարուածի սաստկութիւնը [illegible] պիտի զգան Թուրքիոյ Հայք։ Մակար Օրբազանին անունը չի կար մեր Եռանուն Ցանկի մէջ։ Մեր Ազգ. Ժողով ամեն բանաւոր զիջում բրաւ մեր Ռուսիահայ եղբարց զգացումներուն և իրաւունքներուն, և անոնք ալ, գոհ լինելով Ազգ. Ժողովոյ տնօրինութենէն, յօժարակամ յանձնառու եղան մեր երեք ընտրելիներէ դուրս ուրիշ եկեղեցականի քուէ չտալ։ Մակար Օրբազան քուէ չստացաւ ո՛չ միայն Թուրքիոյ Հայոց Ազգ. Ժողովէն, այլ նաև Ռուսիոյ և Պարսկաստանի Հայոց աշխարհական պատուիրակներէն և Առաջնորդաց ալ մեծագոյն մասէն. Էջմիածնի Սինոդն և Միաբանութիւնը մեծամասնութեամբ հակառակեցան Ազգ. Ժողովոյ տնօրինութեան, քանի որ հաստատապէս որոշած էին ամեն ջանք և հնարք ի գործ դնել զՄակար Օրբազան կաթողիկոսացնելու համար։ Դժբախտաբար, շատ մը յոռետես ենթադրութիւնք և գուշակութիւնք, որք ի սկզբան պարզապէս չարակամութեան արդիւնք կը համարուէին, ահա կը հաստատուին տխրալից լրով զոր հեռագիրը շաբաթ գիշերը բերաւ մեզ։ Կ'ըսուէր թէ Սինոդականք և Միաբանութեան անդամք, քանի որ այնպէս ջերմ փափաքող էին Մակար Օրբազանի կաթողիկոսացման, Մելքիսեդեկ Օրբազանի քուէ տուած էին միայն իբրեւ ապահովագոյն միջոց իրենց նպատակին հասնելու, գիտնալով թէ ռուս կառավարութիւնը չպիտի վաւերացնէր Իզմիրի Առաջնորդին ընտրութիւնը։ Կ'երեւի թէ այս կարծիք ճիշդ է եղեր դժբախտաբար։ Կ'երեւի թէ ռուս Կառավարութիւնը գէշ աչքով կը նայի եղեր Մելքիսեդեկ Օրբազանին։ Կ'ըսուէր նաև թէ Ռուսիոյ բարձրաստիճան հայ եկեղեցականք ոմանք ջանացնար կը լինէին ռուս կառավարութեան մօտ՝ Պեսարապիոյ Առաջնորդին հաստատութիւնն ապահովելու համար։ Ցաւալի է որ այսպիսի անարժան մեքենայութիւնք յաջողութեամբ պսակուած են ի վերջոյ։ Եւ ի՞նչ կը լինի հետեւանքը, տխո՛ւր հետեւանքն. — Ամբողջ Ազգի մը կամքն առանձին կը փոխուի, և փոքրամասնութեան մը, այն ալ Էջմիածնի կղերական դասէն բաղկացեալ փոքրամասնութեան մը ուզած մարդն Ազգին Կաթողիկոս կը լինի։ Ո՞ւր են ընտրական իրաւունք, սահմանադրական իրաւունք, ժողովրդական իրաւունք, ազգային իրաւունք։ Ամենքն ալ կ'ոչնչանան մեքենայութեանց դէզի մը մէջ, և Ինքնակալի մը քմահաճ մէկ հրամանին տակ։ Մեք արդարեւ գժգոհ ենք, և գիտենք թէ այսօր համայն հայ Ազգը գժգոհ է և տխուր։ Շատեր որք ի սկզբան Մելքիսեդեկ Օրբազանի Կաթողիկոս ընտրուելուն նպաստաւոր կարծիք չունէին, փափաքող եղած էին Ն. Սրբազնութեան հաստատման յորժամ անտի ուր այնպիսի ստուար քուէիւ Կաթողիկոս ընտրուած էր։ Գիտէին թէ ազգային կամքն հաշակուած էր, և անոր առջեւ խոնարհելով, կը ճանչէին թէ Կաթողիկոսը պարտէր ընտրուիլ Ազգին մեծամասնութեան կողմէ։ Իսկ Զարն, հաստատելով Պեսարապիոյ Առաջնորդը, կը յայտարարէ արդեամբ թէ իւր առջեւ նշանակութիւն չունի Ազգին մեծամասնութեան կամքը։

Թէ ազգային գժգոհութեան զգացումն ի՛նչ ձեւեր պիտի ստանայ թէ՛ Թուրքիոյ և թէ՛ Ռուսիոյ Հայոց մէջ, չենք կրնար գուշակել։ Բողոքներ հարկաւ պիտի լինին. վերապահութիւններ հարկաւ պիտի ընենք ապագային համար, և, ձախողուածէն խրատեալ, անշուշտ ապագայ կաթողիկոսական ընտրութեանց մէջ ամեն ջանք ու զգուշութիւն պիտի ընենք [illegible] մասնակցելու Էջմիածնի ընտրութեան, և մեր քուէից իրաւունքն ո՛չ թէ լոկ պաշտօնագրերով այլ կենդանի էակներու ձեռամբ պաշտպանել տալու յԷջմիածին։ Բայց թէ՛ որովհետեւ մեր չուզած մէկ ընտրելին հաստատեց Ռուսիոյ Կայսրն՝ Թուրքիոյ Հայք պէտք է բաժնուին Էջմիածնէն և այնուհետեւ հերձուած մը յարուցանեն՝ այս չենք կարծեր որ լրջախոհ ազգայիններու կողմէ կարենայ յանձնարարուիլ։ Նշանակելի իրողութիւն մ'է թէ Մակար Սրբազանի անունը, Ներսէս Սրբազանի վախճանումէն ի վեր, կը գտնուէր եկեղեցական Համագումար Ժողովոյ եօթնանուն ցանկին գլուխն, և շատ անգամ լսած ենք որ մեր եպիսկոպոսներ ու վարդապետներ կը յայտարարէին բարձրաձայն թէ Զարը զո՛վ որ հաստատէ որոյ անունը գտնուի եօթնանուն ցանկին մէջ՝ արժանի է նա կաթողիկոսութեան, և հետեւապէս պիտի ճանչուի և ընդունուի Թուրքիոյ հայ եկեղեցականութեան կողմէ։ Հաւանօրէն այս տեսութեամբ, Թուրքիոյ հայ եկեղեցական մարմինը, ցաւելով հանդերձ մեր սահմանադրական իրաւանց բռնաբարման և մեր Եռանուն Ցանկին վերջնական մերժման վրայ, համակերպի և մխիթարուիլ ջանայ խորհելով թէ հաստատեալ եպիսկոպոսին անունը կը գտնուէր Թուրքիոյ հայ եկեղեցականութեան ներկայացուցիչ ժողովոյն ընտրելեաց գլուխը։ Գալով Ռուսիոյ հայ եկեղեցականութեան, նա եւս առաւել կաշկանդուած է, թէ՛ Ս. Սինոդին և Էջմիածնի Միաբանութեան կողմէ, որոցմէ կ'երկնչի, և որոց յայտնապէս Մակարեան լինելուն տարակոյս չկայ, և թէ՛ ռուս կառավարութեան կողմէ, որոյ Կայսերական տնօրինութեան դէմ ուղղել ո՛ և է ցոյց չի կրնար ընել։ Այսպէս, հաճութեամբ թէ համակերպութեամբ, մեզ կը թուի թէ Ռուսիոյ և Թուրքիոյ եկեղեցական մարմինք Մակար Օրբազանի հաստատման դէմ ուղղեալ շարժման մը պարագլուխ չեն կրնար լինել։ Եկեղեցեաց մէջ նոքա՛ կը պատարագեն, նոքա՛ կը յիշատակեն Կաթողիկոսաց անուններն, և երբ Մակար Օրբազան հաստատուելով Կաթողիկոսական Գահուն վրայ՝ իւր օրհնութեան կոնդակները տարածէ ամեն կողմ, գժուար կը թուի մեզ հաւատալ թէ հայ եկեղեցականք մերժեն զայն։ Իսկ աշխարհական դասն անշուշտ առաւել կ'[illegible] թէ՛ աստ և թէ՛ ի Ռուսիա, բայց Ռուսիոյ ազգայինք ի հարկէ տկար և զգուշաւոր են, և Կայսեր մէկ բացորոշ հրամանին դէմ գործելու և զայն բեկանել տալու կարող չեն։ Մինչեւ հիմա շատ բաներ կրնային ընել Մելքիսեդեկ Սրբազանի հաստատումը դիւրացնելու համար. թերեւս ազդեցութիւններ կրնային բանեցնել և դիմումներ ընել, ինչպէս կ'երեւի թէ ըրած են Մակարեան կուսակցութեան պատկանող բարձրաստիճան կղերք ոմանք։ Բայց անգամ մը որ Վեհ. Զարն արձակած է կաթողիկոսական հաստատման հրամանագիրը, չենք կարծեր որ Ռուսիոյ Հայք, որչափ եւս ազգասէր և եկեղեցասէր լինին, կարենան Ն. Վեհափառութեան ետ առնել տալ զ'իւր հրաման, և հետեւապէս անոնք եւս պիտի համակերպին տնօրինութեան մը, որ արդէն Ռուսիոյ համար օրինական է բոլորովին, ըստ Պոլաժենիոյ տրամադրութեանց, որոցմէ մազիւ չափ շեղեցան և չուզեցին շեղիլ կաթողիկոսական վերջին ընտրութեանց մէջ։ — Կը մնայ ուրեմն գիտնալ Թուրքիոյ աշխարհական դասուն զգացմանց ազդեցութիւնը։ Բայց այս զգացմունք մինչեւ ցարդ նշանակելի կամ զգալի ազդեցութիւն մը չունեցան ռուս կառավարութեան տրամադրութեանց ու տնօրինութեանց վրայ, և հետեւապէս այս անգամ ալ ի՛նչպիսի ցոյցեր ու բողոքներ ընենք, կատարեալ իրողութեան դէմ ո՛ և է կշիռ չեն կրնար ունենալ անոնք։ Մակար Օրբազան Կաթողիկոս հաստատուած է. տխուր իրողութիւն մ'է այս, բայց կատարուած իրողութիւն մ'է վերջապէս։

Երբ կաթողիկոսական ընտրութեան գործն, հոգելոյս Տ. Գէորգ կաթողիկոսին վախճանումէն իբր երեք տարիներ յետոյ այսպիսի անակնկալ և անհաճոյ ելք մը կը ստանայ, մեզ կը մնայ քանի մը տողերով յիշել այն ընթացք զոր Արեւելք բռնեց այս խնդրոյ մէջ, իւր հրատարակութեան առաջին օրէն ի վեր։ Մեք դիմեցինք Պոլաժենիոյ վերաքննելիութեան բացայայտ պէտքին վրայ, և իբրեւ կաթողիկոսական ընտրելի առաջարկեցինք զՀանգուցեալ Պատրիարքը։ Թէ Ներսէս Սրբազանի ընտրութիւնը ժողովրդական էր, և թէ հետեւապէս Արեւելք թարգման կանգնեցաւ ժողովրդային բաղձանաց, այս մասին բնաւ տարակոյս չունինք։ Համագումար Ժողովը, Երեսփոխանական Ժողովը և Էջմիածնի ընտրողական Ժողովը իրենց քուէներով իրաւունք տուին մեր այս տեսութեան։ Բայց Ներսէս Սրբազան պնդեց իւր հրաժարման վրայ, իւր հիւանդութեան անակնկալ մէկ սաստկացմամբ, և շատ չանցած Նախախնամութիւնն իւր անհասանելի կամօք այլապէս տնօրինեց։ — Ներսէս Սրբազանէն յետոյ մեք զԽրիմեան Սրբազան ընտրելի առաջարկեցինք, համոզուած թէ այս ևս ժողովրդական ընտրութիւն մը պիտի լինէր։ Ն. Սրբազնութիւն իւր կողմ ունեցաւ Թուրքիոյ Հայոց Երեսփոխանական ժողովոյն քուէից մեծամասնութիւնն, և Ռուսիոյ և Պարսկաստանի Պատուիրակաց և Առաջնորդաց ալ մեծամասնութեան քուէները։ Նա չկրցաւ ստանալ միա՛յն Էջմիածնի Սինոդին և Միաբանութեան քուէներն, որք գիտենք թէ արդէն Մակար Օրբազանին համար վերապահեալ էին։ Սինոդն և Միաբանութիւնք, վախնալով թէ Խրիմեան Հայրիկ Մակար Օրբազանի դէմ աւելի հզօր մրցակից մը կը լինէր քան Իզմիրի Առաջնորդն, այս վերջնոյն տուին իրենց երկրորդական քուէներ, և Խրիմեան չընտրուեցաւ, զի Էջմիածնականք զՄակար որոշած էին։ — Երբ Մելքիսեդեկ Սրբազան ստացաւ Էջմիածնի Ընտրողական Ժողովոյն քուէից ամբողջութիւնն, Արեւելք անմիջապէս շնորհաւորեց Ն. Սրբազնութեան ընտրութիւնն, և համոզուած լինելով Իզմիրի Առաջնորդին ընտիր հանգամանաց և անժխտելի արժանեաց զորս ուրիշ առթիւ եւս հաշակած էր, ուրախ եղաւ որ, եթէ իւր ցոյց տուած ընտրելին չէր ընտրուած, սակայն և այնպէս Ազգին ընտրեալ Կաթողիկոսն ալ յարգ արժանաւոր եկեղեցական մ'էր։ Մեք հրատարակեցինք անկողմնակալութեամբ Մելքիսեդեկ Սրբազանի ընտրութեան պարագայից և հաստատման հաւանականութեանց մասին մեզ եկած բոլոր տեղեկութիւններն, որք մեր տեղեկութեան ստոյգական աղբիւրներէն կը բխէին։ Մեք այս ուղղութեամբ լաւատես և յոռետես լուրերն հաւասարապէս հրատարակեցինք, և անշուշտ յանցանքը մեր չէ եթէ դէպքերն իրաւունք տուին յոռետես լուրերուն, փոխան լաւատես լուրերուն՝ ինչպէս ամենուս անկեղծ փափաքն էր։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ
ԵՐԵԿԻ ԹՂԹԱԲԵՐԷՆ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ ԱՆԳԼԻՈՅ. Լոնտոն. 15 օգոստ. Խորհրդարանին նստաշրջանն երէկ փակեցաւ Վեհ. Թագուհւոյն մէկ ճառով, որ կ'ըսէ թէ Մէհտիին մահուան շնորհիւ հնար պիտի լինի առաւելագոյն դիւրութեամբ վերահաստատել եգիպտական կառավարութիւնն ամուր հիմանց վրայ. թէ Ռուսիոյ և Անգլիոյ միջեւ ծագած գժուարութիւնք, որք վայրկենապէս ծանր հանգամանք մ'ունին, հարթուելու վրայ են. և թէ Հնդկաստանի կառավարութիւնն յառաջ պիտի տանի երկրին հիւսիսային—արեւմտեան սահմանաց պաշտպանութեան հարկաւոր դատած միջոցներուն կիրառութիւնը։

Թագուհւոյն ճառը կը ծանուցանէ նաև թէ ներկայ Խորհրդարանը լուծուած է, և թէ նոր ընտրութիւնք պիտի կատարին ի մօտոյ։

ՍՊԱՆԻԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ. Մատրիտ, 14 օգոստ. Սպանիական կառավարութիւնը բողոքեց Քարոլինեան կղզեաց Գերմանիոյ կողմէ գրաւման դէմ։

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ԶԱՆԶԻՊԱՐ. Պերլին 14 օգոստ. Գերմանական նաւախմբին հրամանատար Պ. Բոշէնի մէկ հեռագիրը կը ծանուցանէ թէ Զանզիպարի Իշխանը, գերմանական նաւային ցոյցին վրայ, անպայման կերպիւ ճանչած է Գերմանիոյ Կայսեր հովանաւորութիւնը Գերմաններէ գրաւեալ բոլոր երկրին վրայ, որ ի Զանզիպար։

ՍՈՒՏԱՆ. Լոնտոն, 12 օգոստ. Լորտերու ժողովոյն մէջ, Սալըզպըրի Մարքիզը շնորհակալեաց քուէ առաջարկեց Սուտանի մէջ ծառայած անգլ. զօրաց համար. գովեստ խօսեցաւ Ուոլսլի զօրավարին, միւս զօրավարաց, սպայից, զինուորաց և նաւաստեաց վրայ։ Հաւանութեան աղաղակներով ընդունուեցաւ այս առաջարկ։ Երեսփոխանաց ժողովոյն մէջ՝ նմանապէս։ Ուոլսլի զօրավարին այս առթիւ տրուեցաւ ազնուական երկրորդ աստիճանը, (դերակոմսութիւն)։

— Կեդրոնական Ափրիկէի պապական նուիրակ Սօկարօ եպիսկոպոսը Սուտան պիտի վերադառնայ այնան եթէ անգլ. զօրքերն յառաջ խաղան. եթէ ո՛չ Գահիրէ պիտի մնայ։ Սօկարօ եպիսկոպոսն և Պոնոմի վարդապետը կը յուսան ազատել ի մօտոյ քրիստոնեայ գերիներն որք կը գտնուին Մէհտիին մարդոց ձեռքը։

ՀՆԴԿԱՍՏԱՆ. Լոնտոն, 12 օգոստ. Հնդկաստան գտնուող անգլ. զօրաց վրայ 6,000 հոգի պիտի աւելցուին միայն կերպիւ։

ՍԸՐ Հ. ՈՒՈԼՖ. Կ. Պոլիս. 12 օգոստ. Ըստ ամենայն երեւութից, Սըր Հ. Տրըմընտ Ուոլֆ սա երկու խնդրով պիտի զբաղի ի սկզբան. Ա. Վերակազմել եգիպտական բանակն այնպէս որ Եգիպտոսի մէջ բարեկարգութիւնն ապահովի, և անգլ. զօրքերը տակաւ կարենան դուրս ելնել. Բ. Եգիպտոսէն անջատել Սուտանի մէկ մասն, որ ուղղակի Բ. Դրան իշխանութեան ներքեւ պիտի դրուի, Տրիպոլիս և Պէնկազիի ափրիկեան նահանգաց նման։ — Բայց ուրիշ տեղեկութեանց նայելով, Սըր Ուոլֆ պիտի առաջարկէ եղեր որ Սուտանի մէկ մասին ուղղակի Բ. Դրան իշխանութեան ենթարկուելուն փոխարէն, անգլ. հովանաւորութիւն հաստատի ի վերայ բուն Եգիպտոսի։

— Վիէննա, 13 օգոստ. Սըր Տ. Ուոլֆ աստ հասաւ երէկ. մինչեւ վաղը Վիէննա կը մնայ. Երէկ կարճ այցելութիւն մը տուաւ Արտաքին գործոց Նախարարութեան խորհրդականին. Նախարար Քալնոքի կոմսն ուրիշ օրէն կը վերադառնայ Վիէննա. Վարձինէն ուր պիտի տեսնուի Պիսմարք իշխանին հետ, պիտի երթայ [illegible] դղեակն, յայցելութիւն Վիլհէլմ Կայսեր։

ՊՈՒԼԿԱՐԻԱ. Վիէննա, 12 օգոստ. Աղեքսանդր իշխան հրաւիրուեցաւ անձամբ ներկայ գտնուելու մեծ զօրահանդէսներուն զորս աւստրիական զօրքերը պիտի կատարեն այսան ի Պոհեմիա. Իշխանը խոստացաւ գալ։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԺՈՂՈՎՈՅՆ ի պատիւ Պերլինի մէջ օգոստ. 12ի երեկոյն հացկերոյթ տրուեցաւ. 32 տէրութիւնք և հեռագրաց 17 ընկերութիւնք ներկայացուցիչ ունէին այս ժողովոյ մէջ. Պատուիրակաց թիւն յառաջին նոյնն էր 72։

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՀԱԲԷՇԻՍՏԱՆ. Լոնտոն, 13 օգոստ. Տէյլի Նիւզ կ'ըսէ թէ Չերմսայտ գնդապետ Մասաւա կ'երթայ, Հաբէշաց Թագաւորին հետ համաձայնելով զՔասալա ազատելու համար։ (Նորագոյն հեռագրեր այս մասին համաձայնութեան մը Անգլիոյ և Հաբէշաց Թագաւորին միջեւ գոյանալը կը ծանուցանեն։)

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ. Պերլին, 15 օգոստ. Բ. Դուռը խորհրդարար ուզած է իմանալ Պիսմարք Իշխանին կարծիքն այն ընթացից մասին զոր Գերմանիոյ Նախարարապետը կրնայ յանձնարարել Թուրքիոյ՝ բռնել անգլիական նոր առաջարկներուն նկատմամբ, ի մասին Եգիպտոսի։ Կը հաւաստեն թէ իշխանը բացորոշ բան մը չէ ըսած, որով կառավարութեան նախկին անստուգութիւնք նոյն կը մնան։

ՋԱՐԴ ՅԱՆՆԱՄ. [illegible] օգոստ. 14 [illegible] կը ծանուցանէ թէ Աննամի մէջ ջարդուած քրիստոնէից թիւ քանի մը հարիւրը կ'անցնի։

ՀՆԴԿԱՀԱՐԸ ՍՊԱՆԻԱ. Մատրիտ, 12 օգոստ. Սպանիոյ մէջ բազում ուրեք կը շարունակեն տակաւին ցամաքային Մաքրանոցները (լազարէթ), զորս տեղային իշխանութիւնք քմահաճօրէն հաստատած են առ ահի ժողովրդեան։ Բայց ներքին գոր-

---

— 122 —

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺԻՒԼ ՎԵՐՆ

ԿՐԱՆԹ ՆԱՒԱՊԵՏԻՆ ՈՐԴԻՔՆ

ԳԼՈՒԽ Բ.

Ի ԵՐԿՐԵՆ ԱՆՑԵԱԼՆ

Արդարեւ հոլանտացի Նաւապետը կ'երեւակայէր թէ այդ հողեր կը յանգէին այն համանուն կղզեաց, որք գտնուած էին Թէր տը Ֆէօյի արեւելեան կողմը, Ամերիկայի հարաւային ծայրը։ Կը կարծէր թէ «Հարաւային մեծ ցամաքը» գտած էր։

«Բայց, կ'ըսէր Բականէլ, ինչ որ տասնեօթներորդ դարու նաւապետ մը «Ցամաք երկիր» կոչած էր, տասն-իններորդ դարու նաւապետ մը չկրցաւ այնպէս կոչել։ Այսպիսի սխալ մը չկրնար ընդունուիլ։ Ո՛չ, բան մը կայ որ կը վրիպի իմ ծանօթութենէս։»

Դարէ մ'աւելի ժամանակ Թասմանի գիւտը մոռցուեցաւ, և Նոր-Զելանտա անգոյ կը թուէր, երբոր Ֆրանսացի Սիւրվիլ Նաւապետը գտաւ զայն լայնութեան 35° 37 աստիճանին տակ։ Ի սկզբան դժգոհելու պատճառ մը չունեցաւ բնիկներէն. բայց ամենաբուռն հովերու հանդիպեցաւ, և փոթորիկի մը միջոցին իւր հիւանդները կրող մակոյկ մը Ռըֆիւժի ծովածոցին ցամաքն ընկաւ։ Անդ, բնիկներու ցեղապետ մը, Նակի-Նուի, մարդասիրաբար հիւրընկալեց Ֆրանսացիները։ Ամեն բան յաջող գնաց մինչեւ այն վայրկեանն, ուր Սիւրվիլի մակոյկներէն մին գողցուեցաւ։ Սիւրվիլ ի զուր պահանջեց զայն, և վերջապէս գիւղ մը հրկիզելով պատժեց այս գողութեան համար։ Սարսափելի և անիրաւ վրէժխնդրութիւն, որ մասամբ պատճառ եղաւ այն արիւնաշաղ քինախնդրութեանց, որոց թատր պիտի լինէր Նոր-Զելանտա։

1769 հոկտեմբեր 6ին հռչակաւոր Քուք երեւցաւ այդ ծովեզերաց վրայ։ Թաուէ-Բոուա ծովախորշին մէջ երկաթ նետեց իւր Էնտէվըր նաւով և ջանաց քաղցրութեամբ գրաւել բնիկներուն սիրտը։ Բայց մարդոց հետ լաւ վարուելու համար պէտք էր նախ իւր ձեռքն անցունել զանոնք։ Քուք քանի մը բնիկ գերի բռնեց և բռնութեամբ բարերարեց անոնց։ Վերջապէս զանոնք ընծաներով և գգուանօք յղփացնելէ յետոյ ցամաքը վերադարձուց։ Շատ չանցաւ, բազմաթիւ բնիկներ, հրապուրեալ անոնց պատմութիւններէն, Քուքի նաւը գնացին և փոխանակութիւններ ըրին Եւրոպացւոց հետ։ Քանի մ'օր ետքը, Քուք Հաուքի ծովախորշը գնաց, որ հիւսիսային կղզւոյն եղին աղեղնաձեւ ընդարձակ ծոց մ'է։ Անդ պատերազմասէր, կռուանշող և խիզախ բնիկներու պատահեցաւ, որոց ցոյցերն այնչափ յառաջ գնացին, որ Թնդանօթի հարուածով մը հանդարտել հարկ եղաւ։

Հոկտեմբեր 20ին, Էնտէվըր երկաթ նետեց Թոքոլ-Մալու ծովածոցն, ուր երկու հարիւր հոգիէ բաղկացեալ խաղաղ ժողովուրդ մը կը բնակէր։ Նաւուն բուսաբաններն արդիւնաւէտ երկրախուզութիւններ ըրին երկրին մէջ, և բնիկներն իրենց կուբերով ծովեզրը փոխադրեցին զանոնք։ Քուք երկու գիւղ այցեց, որք ցցապատնէշներով, որմերով և կրկին խրամներով շրջապատեալ էին և ցոյց կուտային թէ բնակիչք քաջահմուտ էին բանակագրութեան։ Այս ամրոցներէն կարեւորագոյնն ապառաժի մը վրայ կառուցուած էր, որ մեծ մակընթացութեանց ժամանակ կատարեալ կղզի մը կը դառնար, և լաւագոյն եւս քան զկղզի, վասն զի ոչ միայն ջուրերը կը շրջապատէին զայն, այլ եւ մռնչելով կ'անցնէին վաթսուն ոտնաչափ բարձրութեամբ կամարի մը մէջէ, որոյ վրայ կառուցեալ էր այս անմատչելի ամրոց։ Քուք, հինգ ամիս անդ կենալով, բազում հետաքրքրաշարժ նիւթեր, բնիկ տունկեր, և ազգաբանական ու ազգագրական գրութիւններ հաւաքելէ զկնի, իւր անունը տուաւ երկու կղզիները բաժնող նեղուցին, և մեկնեցաւ Նոր-Զելանտայէն, զոր վերստին պիտի գտնէր իւր ապագայ ուղեւորութեանց մէջ։

Արդարեւ, 1773ին, մեծ Նաւապետը վերստին երեւցաւ Հաուքի ծովախորշին մէջ, և մարդակերութեան տեսարաններու ներկայ գտնուեցաւ, որոց իւր ընկերները պատճառ եղան։ Իւր սպաներէն ոմանք դեռատի վայրենւոյ մը կրճատեալ անդամները գտնելով գետնին վրայ, ժողվեցին նաւը տարին և եփել տալով բնիկներուն ընծայեցին, որք որկրամոլաբար վրան ընկնելով լափեցին։ Տխո՛ւր զբօսանք, որով Քուքի սպաներն այսպէս մարդակերական ճաշի մը խոհարար ըրին զիրենք։

Քուք, իւր երրորդ ուղեւորութեան միջոցին, դարձեալ այցեց այս երկիրները, զորս մասնաւորապէս կը սիրէր, և որոց ջրագրական քարտէսն ամբողջացնել կը ջանար։ Վերջին անգամ մեկնեցաւ 1777 փետրվար 25 ին։

1791ին, Վանքուվէր քանիօրեայ դադար մ'ըրաւ Սոմըր ծովախորշին մէջ, առանց որ եւ է օգուտ մը քաղելու բնական կամ աշխարհագրական գիտութեանց համար։ 1793ին, Անթրըքասթոյ քառսուն-հինգ մղոն ծովեզր քննեց և գծագրեց Իքա-Նա-Մաուիի հիւսիսային մասին մէջ։

Հաւզէն և Տըլրիմբ առեւտրական նաւապետք և անոնցմէ յետոյ Պառէն, Բրիքարտըն և Մուտի կարճ այցելութիւն մը տուին այդ կղզեաց, և տօքթօր Սեւէյժ, հինգ շաբաթ բնակելով անդ, ուշագրաւ տեղեկութիւններ հաւաքեց Նէօ-Զելանտացւոց բարուց և սովորութեանց վրայ։

Նոյն տարին, այն է 1805ին, Րանկուիհու ցեղապետին որդին, հանճարեղն Տուա-Թարա, Եւրոպա ուղեւորեցաւ Արկոյ նաւով, որ Պէ-տէզ-Իլ ծովածոցին մէջ երկաթ նետած էր, և որում կը հրամայէր Պարէն Նաւապետ։

Տուա-Թարայի արկածները կրնան դիւցազներգութեան մը նիւթ ընծայել Հոմերի մը։ Այնքան բազմաթիւ եղած են այլեւայլ դէպքերով, անիրաւութեամբք, չարչարանօք։ Խոստմնազանցութիւն, պատանդում, հարուած և վէրք, սոքա եղան գժբաղդ վայրենւոյն ստացած հատուցումն ի փոխարէն իւր բարի և հաւատարիմ ծառայութեանց։ Ի՞նչ գաղափար ունեցաւ արդեօք այն մարդոց վրայ, որք քաղաքակրթեալ կը կոչեն զիրենք։ Լոնտրա տարին զայն, յետոյ կարգի նաւաստի մ'ըրին, զոր անխնայ կ'աշխատցնէին նաւագք։ Եթէ վերապատուելի Մարստէն չգթար անոր վրայ և չօգնէր, խեղճը պիտի մեռնէր վաստակաբեկ։ Այդ քարոզիչ համակրութիւն զգաց դեռատի վայրենւոյն վրայ, տեսնելով անոր ուղիղ դատողութիւնը, քաջութիւնը, քաղցր, շնորհալի և մարդասէր բնաւորութիւնը։ Մարստէն քանի մը պարկ ցորեն և մշակութեան գործիներ ձեռք բերաւ իւր պաշտպանելոյն համար, որպէս զի իւր հայրենի երկիրը վերադառնալով երկրագործութիւն ընէ. բայց գողցան անոր այս փոքրիկ հարստութիւնը։ Նորէն դժբաղդութիւնք և տառապանք ընկճեցին զԻեք Տուա-Թարա մինչեւ 1814, յորում վերահաստատեալ կը գտնենք զինք իւր նախնեաց երկրին մէջ։ Եւ երբ այնչափ յեղակարծութեանց պտուղը քաղելու վրայ էր, և կը պատրաստուէր բարեկարգել զարիւնախանձ Զելանտա, մահը վրայ հասաւ քսանութ ամեայ հասակին մէջ։ Այս անդարմանելի դժբաղդութեան պատճառաւ քաղաքակրթութիւնն երկար տարիներ ետ մնաց այդ երկրին մէջ։ Ոչինչ կրնայ բանել հանճարեղ և բարի մարդու մը տեղն, որ բարւոյ սէրն հայրենեաց սիրոյն հետ կը լծորդէ իւր սրտին մէջ։

Մինչ 1816 անտես մնաց Նոր-Զելանտա։ Նոյն տարին Թոմփսըն և յաջորդ տարին Լիտիար Նիքոլաս, 1819ին Մարսդէն, այդ երկու կղզեաց այլ եւ այլ կողմերը պտըտեցան, և 1820ին, Րիչըր Քրուիզ, հետեւակազօրաց ութսուն-չորրորդ գնդին մէջ հարիւրապետ, տասն ամիս անդ կենալով, կարեւոր ուսումնասիրութիւններ ըրաւ բնիկներուն բարուց և սովորութեանց վրայ։

1824ին, Տիւբէրէ, հրամանատար Քոգիլ մարտանաւին, տասն-հինգ օր կեցաւ Կղզեաց ծովածոցն, և գոհ եղաւ բնիկներէն։

Անկէ յետոյ, 1827ին անգլիական Մերքուրի կիտորսանաւն հարկադրեցաւ ինքզինք պաշտպանել աւարառութեան և սպանութեան դէմ։ Նոյն տարին Տիլլոն Նաւապետ երկիցս դադար ընելով անդ, սիրալիր ընդունելութիւն գտաւ։

1827 մարտին Աստրոլապ հրամանատար մեծանուն Տիւմոն-տ'Իւրվիլ կրցաւ՝ առանց զինուց՝ քանի մը գիշեր անցունել բնիկներուն մէջ, ընծայներ և երգեր փոխանակել, նոցա տաղաւարներուն մէջ ննջել, և առանց բնաւ արգելքի շարունակել իւր երկրաչափական աշխատութիւններն, որք գեղեցիկ քարտէսներ ընծայեցին ծովային պաշտօնատան Թանգարանին։

Ընդհակառակն, հետեւեալ տարին, անգլիական Հէյս երկկայմին հրամանատար Ճոն Ճէյմս, Կղզեաց ծովախորշն հանդիպելէ զկնի, դէպ յԱրեւելեան հրուանդան նաւարկելով, շատ վիշտ կրեց Էնարարոյ անուն նենգաւոր ցեղապետէ մը։ Իւր ընկերներէն ոմանք կատաղած եղան։

(Շարունակելի)

ծոց նախարարը խոստում կը պատմէ այս անտեղի տնօրինութեան վրայ յանառողներն, և անմիջապէս պաշտօնանկ կ'ընէ թէ՛ կառավարիչներ և թէ՛ քաղաքապետներ : Սպանիական մամուլը միաձայնու կը հաւանի նախարարին ջանից, որ կ'աշխատի վերջ տալ սարսափահար ժողովրդեան երկիւղներուն : Լրագիրք կ'ըսեն իրաւամբ թէ ծխումները դրութիւնք պարզապէս տանջանք մ'է առանց օգտի, և բնաւ ապահովութիւն չընծայեր հնտախտին ճարակման դէմ : — Մարսիլի մէջ եւս հնտախտէ բռնուողներուն և մեռնողներուն թիւն աւելցած է :

ԿԵԴՐ. ԱՍԻԱ. Թէհրանէ կը ծանուցուի շատ մարդիկ կը մեռնին ափղանեան սահմանաց վրայ համախմբեալ ռուս զօրաց մէջ, մանաւանդ մերձ ի Բէնջտէհ : Թղթակիցք ոմանք զայս կը վերագրեն հնտախտի երեւման ի մէջ Ռուսաց, այլք՝ թանջքի :— Կասպից ծովէն անդին կեդր. Ասիոյ զանազան կողմերը գտնուող ռուս զօրաց թիւն է 28.000 հետեւակազօր և 16.000 հեծելազօր :

ՀԵՐԱԴ. Յուլիս 30 թուով կը գրեն Հերաթէ, թէ քաղաքին իշխանութիւնք կը գնեն և կ'ամբարեն մեծ քանակութեամբ ցորեն, վախնալով նորէն թէ Ռուսիա պատերազմի պիտի բռնուի Աֆղանստանի հետ, Հերաթի և շրջակայից գրաւման համար : 2,000 մարդիկ շարունակ կ'աշխատին Հերաթի ամրութեանց : Մեծ եռանդ ցոյց կուտան բնակիչք, որք որոշուած են աղուապէս պաշտպանել զՀերաթ ռուսական յարձակման մը դէմ : Անգլ. զինուորական յանձնախումբը վասն գծման ափղանեան սահմանաց կը գտնուի Հերաթի արեւմտեան կողմն իբն մղոն (3 ժամ) հեռի :— Ասգապատէ կը ծանուցուի թէ ռուսական երկաթուղին, որ շինութիւնը փութով ընթացեամբ յառաջ կը տարուի, մինչեւ Ասգապատ պիտի լրանայ հոկտ. ամսուն մէջ :

ՄԻԱՑ. ՆԱՀԱՆԳՔ. Ծանուցած ենք արդէն թէ Ամերիկացիք կ'աշխատին ժողովրդային հանգանակութեամբ մը կառուցանել փառաւոր պատուանդան մը Պ. Պարթօլտիի յօրինած «Տիեզերքը լուսաւորող Ազատութեան Արձանին», զոր Փրանսական ազգը նուիրած է ամերիկեան ազգին : Արձանն արդէն փոխադրեցաւ յԱմերիկա : Պատուանդանի շինութեան հանգանակութիւնը բացած էր Նիւ-Եօրք Ուօրլտ լրագիրն, որ անցեալ շաբաթ օր ամբողջացուցած է զայն, հանգանակելով 102,006 տոլար, զոր նուիրած են 120,000 ստորագրողք :

«ՀԱՐՍՏԱՀԱՐԵԱԼ ԱԶԳՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԼՈՐՏ ՍԱԼԶՊԸՐԻ» . Պուքրէշէ առ Թայմզ կը հեռագրեն օգոստ. 11 թուով սա ծանրակշիռ տողեր . «Այն ձեռնարկութեան առթիւ զոր Հրեայք ըրին Սալզպըրի Մարքիզին մօտ անգլ. կառավարութեան միջնորդութիւնը խնդրելու ի նպաստ հարստահարեալ Հրէից Ռումանիոյ, Պուքրէշի նախարարական Թէլէկրաֆ լրագիրը կը պահանջէ որ Ռումանիայէն արտաքսուին այն Հրեայք որք դրդիչ եղած են այս ձեռնարկութեան և կամ գոնէ ենթարկուին պետական [illegible], որովհետեւ հրաւէր կարդացած են օտար տէրութեան մը միջամտութեան Ռումանիոյ ներքին գործոց :»

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱԿԱՐ Ա.

ՀԱՍՏԱՏԵԱԼ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՅՆ» ԲԵՏՐՍԲՈՒՐԿԻ

«Պեսարաբիոյ Հայոց թեմին
«Առաջնորդն՝ Ամեն. Տ. Մակար
«Սրբազան՝ հաստատուելով Թա-
«գաւոր—Կայսրէն Ամենայն Հա-
«յոց Կաթողիկոս, կ'արձակուի
«իւր այժմեան Առաջնորդական
«պաշտօնէն :»

Շաբաթ, 3/15 Օգոստ.

Զարմանալով կը զարմանանք որ այսօր մինչեւ լրագրոյս հրատարակման ժամը Պատրիարքարանը տակաւին ո՛ և է հեռագիր չունէր Կաթողիկոսական խնդրոյն ելից վրայ :

Ստուգեցինք նաև թէ թիւրիմացութեան մը արդիւնք էր այն լուր թէ Ռուսիոյ Դեսպանատունն եւս հեռագիր ստացած է : Մինչեւ այս առաւօտ, Դեսպանատունն հեռագիր չունէր : Մակար Սրբազանի հաստատման լուրն հեռագրած է ցարդ միայն Արեւելքին Բեդրսպուրկի Թղթակիցն, որոյ հեռագիրը կիրակի առաւօտէն ի վեր բերնէ բերան տարածուած է ի Կ. Պոլիս :

Մակար Սրբազան, զոր Ռուսիոյ կայսրն, առաջին անգամ ի գործ դնելով Պոլոժէնիոյ մէջ իրեն վերապահուած վէթօյի իրաւունքն, այս շաբաթ օր հաստատեց Հայոց կաթողիկոս և Ծայրագոյն-Պատրիարք, է իբր եօթանասուն տարեկան, բայց քաջառողջ և առոյգ է : Վարդապետ ձեռնադրուած է հոգելոյս Տ. Ներսէս Աշտարակեցի Կաթողիկոսէն, և գործած է ընդ հրամանօք այն հռչակաւոր Կաթողիկոսին : Զանազան պաշտօններ վարած է Էջմիածնի մէջ և Էջմիածնէն դուրս : Հրատարակ եկած է ի Կ. Պոլիս Տ. Մատթէոս Կաթողիկոսին ընտրութեան առթիւ եղած է Տփղիսի Առաջնորդ, և բաւական ժամանակէ ի վեր Պեսարաբիոյ Առաջնորդ էր : Տ. Գէորգ Կաթողիկոսի վախճանումէն ի վեր Կաթողիկոսական Տեղակալ էր, բայց ժամանակին մեծագոյն մասն ի Քիշնեւ առաջնորդանիստ քաղաքն անցուց, թողլով զոյն փոխանորդ պաշտօնով Բարախեան Մկրտիչ եպիսկոպոսին : Անցեալ տարւոյ կաթողիկոսական ընտրութեան պահուն աշխարհական պատուիրակաց ստիպմամբ հրաժարական մատոյց ի [illegible] . Հոգելոյս Տ. Ներսէս Սրբազանի ընտրութիւնն և հաստատութիւնն ապահով ընելու համար . բայց ա՛յնչափ բարկացաւ այս ստիպման համար, որ անմիջապէս յետոյ Պեսարաբիա գնաց մեկուսացաւ, և այլ եւս չերեւցաւ Էջմիածին, թողլով իւր եռանդոտ կուսակցաց յառաջ մղել իւր ընտրութեան գործն յաջորդ անգամուն, թէ՛ Էջմիածնի մէջ և թէ՛ դուրս : Մակար Սրբազան չունի ջերմ կուսակիցներ Ռուսիոյ աշխարհական դասուն մէջ, բայց ի Մեղու Հայաստանի լրագրոյ խմբակէն, որ սակայն զգուշացած էր միշտ զՆ. Սրբազանութիւն յայտնի բանիւք մնորհի առաջարկելէ, ա՛յնչափ ստոյգ է թէ Ռուսիոյ աշխարհական ազգայինք համակիր չեն Ն. Ամենապատուութեան : Գլխաւոր ամբաստանութիւնն որ կը լինի Մակար Սրբազանի դէմ, իւր պաշտօնավարութեան մէջ թուլութիւնն է և անտարբերութիւնն ազգային շահերու : Բայց անժխտելի է թէ Գէորգ Կաթողիկոսին և Ներսէս Սրբազանին ընտրութեան առիթներուն մէջ ինք ջերմ ջատագով եղած էր Թուրքիոյ Հայոց իրաւանց անեղծ պահպանման :

Ի մօտոյ պիտի հրատարակենք Մակար Սրբազանի ընդարձակ մէկ կենսագրութիւնը :

* * *

Տարօրինակ զուգադիպութեամբ մը, Մակար Սրբազանի կաթողիկոսական պաշտօնին անուանուելուն լուրը Թուրքիոյ Հայոց մէջ հրատարակուած է Ն. Սրբազնութեան անուան տօնախմբութեան օրն, երէկ :

* * *

Ազգ. Վարչութեան Խառն Ժողովն գումարեցաւ երէկ ի Պատրիարքարան ընդ Նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր : Թէ՛ կրօնական և թէ՛ Քաղաքական Ժողովները մեծամասնութեամբ ներկայ էին :

Ժողովը գլխաւորաբար Ընծայարանի խնդրով զբաղելով, որոշեց գրեթէ նոյնութեամբ ընդունիլ կրօնական Ժողովոյ ծրագիրն Ընծայարանի հաստատման միջոցներուն վրայ, սա պայմանը միայն աւելցնելով որ Ղալաթիոյ կալուածներէն մի քանին Ընծայարանի գոյութիւնն ապահովելու յատկացուին :

Ժողովն ապա զբաղելով ծեր և անկար քահանայից վիճակի ապահովութեան խնդրով, հանգստեան թոշակի ծրագիրն յատուկ մասնախմբի մը նախաքննութեան յանձնեց :

* * *

Ղալաթիոյի խումբ մ'ազգայինք երէկ հանրագրութեամբ մը Խառն Ժողովն ներկայանալով խնդրեցին որ Ղալաթիոյ առժամեայ Թաղային Յանձնաժողովը դադրի իւր պաշտօնէն և հրահանգ տրուի իրենց ըստ Սահմանադրութեան Թաղ. Խորհուրդ մ'ընտրելու :

Ժողովը պատասխանեց յիշեալ ազգայնոց թէ պէտք է վստահութիւն ունենան Պատրիարքարանի վրայ և այլ եւս Ժողովոյն չներկայանան այդպիսի խնդրոց համար :

* * *

Խառն Ժողովոյ նիստն երէկ մինչեւ երեկոյ տեւելուն համար կրօն. Ժողովը առանձին նիստ չկրցաւ ընել :

* * *

Ս. Պատրիարք Հայրը թեթեւ տկարութիւն մ'ունենալով, հաւանական է որ այսօր Երուսաղեմատունէն դուրս չելնէ :

* * *

Գեր. Գէորգ Վարդապետ Իւթիւճեան Պալըքէսիրի Առաջնորդ ընտրուած լինելով, ընտրական տեղեկագիրն հասած է ի Պատրիարքարան :

* * *

Ազգային առանձնաշնորհմանց վերաբերեալ երկու խնդիրք եւս այս օրերս նպաստաւոր լուծում մը կը ստանան :

Կը լսենք թէ Բարձր Մեծ-Եպարքոսը, ջնջելով Եզնիկ եպիսկոպոսի դէմ տրուած դատավճիռն, հրաման ըրած է որ Ն. Գերապատուութիւն իւր Աբարկերի առաջնորդական թեմը վերադառնայ, և Գրիգորիս եպիսկոպոսն ալ՝ ի Մուշ : Այս բարձրագոյն հրամանը պարունակող պաշտօնագիրն այսօր կամ վաղը կը հասնի Պատրիարքարան :

Ինչպէս Ամեն. Ս. Պատրիարք Հայրն ալ ծանոյց յատենի Ազգ. Ժողովոյ, ի մօտոյ կ'ելնէ կառավարական հրամանագիրն ալ, որուն համեմատ՝ [illegible] սովորութեան՝ գաւառաց Իտարէի ժողովոյ մէջ Միւֆթիին յետոյ Յունաց Մետրապոլիտն և անկէ ետքը Հայոց Առաջնորդը պիտի բազմին, և ուրիշ համայնքութեանց կրօնային գլուխք Հայոց ներկայացուցիչներէն յառաջ չպիտի բազմին՝ պաշտօններու մէջ երիցագոյն լինելու պատրուակաւ : Այսպէս Կոնիոյ Իտարէի ժողովոյն մէջ Հայ-կաթոլիկ համայնքութեան Առաջնորդն որ Հայոց Տ. Յարութիւն Ս. Առաջնորդին մեկնումէն ի վեր Հայոց Առաջնորդէն վեր կը բազմէր, տեղի պիտի տայ Գեր. Օրմանեան Հօր, որ պիտի բազմի Յունաց Մետրապոլիտէն անմիջապէս ետքը :

* * *

Կը լսենք թէ Ամեն. Տ. Յարութիւն Ս. Պատրիարք Հայրն այս օրերս ֆրանսերէն հեռագիր մ'ուղղած է առ Միւզիւրիւս փաշա, Օ.Մ. դեսպանն ի Լոնտոն, յայտարարելով թէ «Պ. Յակոբեան ո՛ և է պաշտօն չունի խօսելու ի դիմաց Թուրքիոյ Հայոց, որք հաւատարիմ հպատակներն են Վեհ. Սուլթանին :»

* * *

Երուսաղեմի վանքին Համարատուութեան մէջ որ ներկայացուեցաւ Ազգ. Ժողովոյ վերջին նստին, երկարօրէն պատմուած և հաստատուած են Կարկուր էֆէնտիի «խարդախութիւնք և նենգութիւնք ,» որոց վրայ Արեւելքի մէջ բաւական տեղեկութիւնք արդէն հրատարակուած են : — Երուսաղեմատան փաստաբանք կատարեալ ապահովութիւն ցոյց կուտան թէ Թահգըզաթի Շէրիէէ վերաքննիչ ատեանը պիտի բեկանէ Գազասկէրի դատարանին վըճիռը :

* * *

Մաքրի-գիւղի Արծրունեան երկսեռ վարժարանաց տարեկան հարցաքննութիւնք աւարտած լինելով, մըրցանակաբաշխութեան հանդէսը պիտի կատարի յառաջիկայ կիրակի, 11 Օգոստոս ի ժամ 6, գիւղին եկեղեցւոյն մէջ :

* * *

Միլլիյէ Վարժարանին այս տարուան 23 աւարտականաց մէջ կը գտնուին երկու հայազգի աշակերտք, որք են Տիգրան էֆ. Մարտիրոսեան և Յովհաննէս էֆ. Շալճեան :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

[illegible] ստացուած հեռագիրք կը ծանուցանեն թէ Սըր Հէնրի Տրըմնտ Ուոլֆ և իւր հետեւորդք չորեքշաբթի իրիկուն միայն պիտի կրնան Վառնա գտնուիլ, հետեւաբար հինգշաբթի առաւօտ Բամաք կը հասնին ուր 24 ժամու օրինական քարանթինան ստանէ յետոյ ուղղակի առաւօտ Թարապիա պիտի երթան, և, ինչպէս արդէն ըսած ենք՝ Բէյքոզա պանդոկը պիտի իջնեն :

Կը լսենք թէ անգլ. դեսպանատան երկրորդ թարգման Պ. Հիւկօ Մարինիչ իբր պաշտօնական թարգման պիտի ընկերակցի Թագուհւոյն արտասովոր պատուիրակին :

Սըր Ուոլֆ Վիէննայի մէջ տեսակցեր է օսմանեան դեսպանին և Ելեւմտից ու Պոսնա-Հէրսէկի նախարար Պ. Քալլէյի հետ :

* * *

Անգլիական դեսպան Սըր Հուայտ, իւր տիկնոջ ու դստեր հետ ուրբաթ օրը ներկայ գտնուեցաւ Սէլամլըքի հանդիսին : Վեհ. Սուլթանն որ մզկիթին մէջ կը գտնուէր, նշմարելով անոնց ներկայութիւնն, Բէշիտ պէյի միջոցաւ հրաւէր զրկեց դեսպանին և նորա ընտանեաց որ Եըլտըզի պարաստանն այցելեն և միջօրէի ճաշը պալատան մէջ ընեն : Այս սիրալիր հրաւէր ընդունուեցաւ բնականաբար և Բէշիտ պէյ գնաց խնդրել նաեւ Հօպարտ փաշայէն՝ որ նոյնպէս ներկայ էր հանդիսին, ընկերանալ Սըր Հուայթի :

Դեսպանը, դեսպանուհին, ծովակալն և Օր. Հուայտ Եըլտըզի մէջ ընդունուեցան արքունի թիկնապահ Ալի Նիզամի փաշայի կողմէ որ ի դիմաց Վեհ. Սուլթանին հիւրընկալեց և մեծարեց զանոնք : Բարձրաստիճան հիւրերն պալատական կառօք շրջեցան Եըլտըզի ընդարձակ ու գեղազուարճ պարտէզն, և այցելեցին պալատան ախոռներն : Ապա պալատան մէջ փառաւոր սեղան մը տրուեցաւ Սըր Հուայթի և իւր ընտանեաց որք իրիկուան կամ հրաժեշտ առին Ալի Նիզամի փաշայէ և Բէշիտ պէյէ ու պալատական կառօք Տօլմա-պախչէ իջան ուստից դեսպանատան շոգենակովը Թարապիա գնացին :

* * *

Կայս. կառավարութիւնը Փարիզի երեւելի դրամատէրներէն միոյն հետ բանակցութեան մէջ է այս պահուս փոխառութիւն մը կնքելու համար, որ պիտի յատկացուի Թուրքիոյ պատերազմական զօրութիւններն աւելցընելու համար լինելիք ծախուց :

* * *

Կայսերական Միւլքիէ Վարժարանի աշակերտաց մրցանակաբաշխութեան հանդէսը կատարուեցաւ երէկ մեծ շքով վարժարանի պարտէզին մէջ :

Յայտնի է թէ սոյն վարժարանք կը գտնուի Վեհ. Սուլթանի բարձր հովանաւորութեան ներքեւ :

Նորին Կ. Վեհափառութիւն բարեհաճած էր, ինչպէս ամեն տարի նոյնպէս և այս տարի ծանրագին նուէրներ զրկել աշակերտաց տրուելու համար : Հանդիսին ներկայ կը գտնուէին՝ ի դիմաց Ն. Կ. Վեհափառութեան՝ կայսերական քարտուղար Ալի Րիզա փաշա և Բէշիտ պէյ, Բարձր. Մեծ-Եպարքոս Սայիտ փաշա, Շէյխ-իւլ-Իսլամ Խասա էֆէնտի, Ներքին և Արտաքին գործոց նախարարք, Պետական խորհրդոյ Նախագահն, Ելմտական, Առեւտրական, Էվգաֆի և Կրթական նախարարք և այլ բարձրաստիճան անձինք :

Մեր ազգայիններէն, Մաքսային խորհրդոյ Նախագահ Բօրթուգալ Միքայէլ էֆէնտի Հաշուակալութեան դիւանի անդամ Սագըզ Յովհաննէս էֆէնտի և Տահպազ էֆէնտի :

Հանդէսը բացուեցաւ վարժարանի տնօրէն Ասըմ իւլ Բաշման էֆէնտիի ատենախօսութեամբ, որուն յաջորդեց ի դիմաց աշակերտաց պատրաստուած ուրիշ ճառ մը, զոր կարդաց Մէհմէտ Թէվֆիք էֆէնտի, այս տարուան շըրջանաւարտից առաջինն :

Ապա Բարձր. Մեծ-Եպարքոս Սայիտ փաշա ընտիր և պերճախօս ատենաբանութիւն մ'ըրաւ, որոյ թարգմանութիւնը պիտի հրատարակենք մեր վաղուան թուով :

Յետ այսօրիկ ժամ 5 ին մրցանակաց բաշխումն սկսելով տեւեց մինչեւ ի ժամ 7 :

Բարձր Մեծ-Եպարքոսն և կայսերական քարտուղար Ալի Րիզա փաշա իրենց ներկայութեան կոչելով վերոյիշեալ Մէհմէտ Թէվֆիք էֆէնտին, որ ամենէն աւելի մրցանակաց արժանացած էր, մասնաւոր գովեստներ տուին նմա ի լսելիս աշակերտաց :

Զինուորական նուագածուաց խումբըն, որ մերթ ընդ մերթ կը նուագէր, այդ միջոցին սկսաւ գեղեցիկ երգ մը երգել :

Հանդէսը վերջացաւ Վեհ. Սուլթանի ուղղեալ մաղթանքներով, ու հան[illegible] մեկնեցան ժամ 10 ին :

* * *

Այս աւուր Թարիք հնտախտի վրայ խօսելով դարձեալ ուշադրութիւն կը հրաւիրէ Դաւուտ փաշայի, Եյուպի և Պալատի անմաքրութեանց վրայ, և ի վերջոյ կը յարէ . «Քանի որ այդ տեղերն այս ատենի վիճակի մէջ մնան, պէտք է գիտնալ թէ քարանթինաներու և մաքրութիւններու համար ծախսուած գումարներն ի զուր կը վատնուին :»

* * *

Առողջապահական Խորհուրդն իւր երեկի արտասովոր նստին մէջ կարեւոր խորհրդակցութիւններ ունեցաւ մայրաքաղաքիս առողջապահիկ միջոցներուն վրայ :

* * *

Այսօր, Աւստրիոյ Ֆրանձ Եօզէֆ կայսեր ծննդեան տարեդարձը լինելով, առաւօտուն գոհաբանական աղօթքներ կատարուեցան Սանթա-Մարիա եկեղեցւոյն մէջ ուր ներկայ գտնուեցան դեսպանն ու դեսպանատան և հիւպատոսարանի պաշտօնեայք :

Օսմ. պահակ շոգենաւէն արձակուած թնդանօթի 21 հարուածներ աւստրիական դրօշն ողջունեցին :

Միջօրէին, Պ. Քալիչէ Բերայի դեսպանատան մէջ պիտի ընդունի աւստրիացի երեւելի հպատակաց շնորհաւորութիւնները : Կայս. պալատէն և Բ. Դռնէն եւս յատուկ պաշտօնատարք դեսպանատուն կ'երթան ի շնորհաւորութիւն :

Երեկոյին շքեղ պարահանդէս մը պիտի տրուի Պէօյիւքտէրէի ամառանոցին մէջ ուր լուսավառութիւնք պիտի կատարուին :

Երեք հարիւրէ աւելի բարձրաստիճան անձինք, կառավարական պաշտօնեայք, դեսպանական մարմինք և երեւելի աւստրիացիք հրաւիրեալ են հանդիսին :

* * *

Շաբաթէ մ'ի վեր մայրաքաղաքս կը գտնուի հոլանտացի հնախոյզ Պ. Ալլար Պիէրսըն որ հոլանտական դեսպան Պ. Վան Թէյթսի միջոցաւ պատիւ ունեցաւ Մեծ-Եպարքոսին և Ներքին ու Արտաքին գործոց Նախարարաց ներկայանալու :

Պ. Պիէրսըն քանի մ'օրէն կը մեկնի աստի, եպարքոսական յանձնարարագրեր ի ձեռին, Փոքր Ասիոյ կողմերը գիտական խուզարկութիւններ ընելու համար ի հաշիւ իւր կառավարութեան :

Էսթաֆէթ կ'ըսէ թէ անգլ. կառավարութիւնն իւր կատարեալ հաւանութիւնն յայտներ է այն ուղղութեան համար որով Պ. Բէնչ՝ անգլ. հիւպատոս Կ. Պոլսոյ՝ մեծ աշխատութեամբ աւարտեց մաքսային սակագնոց որոշումն որք իբր հիմ պիտի ծառայեն յառաջիկայիւ կնքելի անկլօ-Թրքական առեւտրական Դաշնագրոյն :

* * *

Վեհ. Սուլթանը լսելով որ Ադրիանուպոլսոյ արքունի ագարակաց տնօրէն Շէֆգի պէյ նիւթապէս վնասուեր է քաղաքին անգլիական հիւպատոսարանի վերջին հրդեհին պատճառաւ, հրամայեր է իւր անձնական Գանձու նախարարութեան որ դրամական օժանդակութիւն մ'ընէ յիշեալ սպային :

* * *

Ադրիանուպոլսոյ անգլ. հիւպատոս Պ. Ժ. Բոլլէրթ քանի մ'օրուան արձակուրդով Մայրաքաղաքս եկաւ :

* * *

Կրէտէի կուսակալ Սավա փաշա իւր պաշտօնի գլուխը վերադարձեր է, քննական պտոյտ մ' կատարելէ յետոյ կղզւոյն այլ և այլ կողմերը : Քանիայի մէջ Սավա փաշա աշխատեր է հանդարտեցնել տեղացւոց մինչեւ ժամանակէ մ'ի վեր ծագած անհամաձայնութիւններն որք մեծապէս կը վնասէին հանրային բարեկարգութեան և կըղզւոյն անդորրութեան : Սակայն կուսակալի ջանքերն սպասուած արդիւնքը չեն ունեցեր :

* * *

Կայս. կառավարութիւնն որոշած է այլ և այլ գաւառաց մէջ դիզուած արմտեաց տասանորդի տրոց գանձումը վարձու տալ :

Մոնիթէօր ծանուցանելով զայս, կը յարէ թէ Ներքին գործոց Նախարարութիւնն այս մասին պէտք եղած հըրահանգներն ուղղած է կուսակալներուն : Կը կարծուի թէ այս հաշուէն 5-600,000 ոսկւոյ գումար մը կայ գանձելի :

* * *

Ամասիոյ աղէտալի հրդեհին պատճառած վնասք քանի մը հարիւր հազար ոսկի կը հաշուի, կ'ըսեն Թուրք լրագիրք : Հրկիզելոց նպաստամատոյց կեդրոնական Յանձնաժողովն նպաստ պիտի հասցնէ այդ դժբաղդ հրկիզելոց :

* * *

Պոլսէն Նուվէլ տը Քօնսթանթինօփլ լրագրոյն ուղղեալ տեղեկութեանց նայելով, Օսմ. Հանրային Պարտուց վարչութիւնը մտադիր է կայս. կառավարութեան հետ բանակցութեան մտնել օսմանեան դրամոց վասին ինչ ինչ բարենորոգումներ մտցունելու համար : Այս նպատակաւ յիշեալ վարչութիւնը տրամադիր է երեք տարեկան 50.000 ոսկւոյ գումար մը զոհել, վեց ու կէս տարի և [illegible] դարձեալ [illegible], ըստ որում իւր հասոյթք մեծ մասամբ [illegible] դրամներով կը լինին : Այս առաջարկութեան գլխաւոր կէտն է հնգնոցները, վեցնոցներն ու մէթալիկ բոլոր դրամները շրջաբերութենէ դադրեցունելով, արծաթ դրամներ կոխել տալ . իսկ գործածական մանր դրամի համար Նէքէլ կոչուած մետաղը գործածել :

* * *

Ըստ կանխագոյն ծանուցման մայրաքաղաքիս ամերիկեան հպատակք շաբաթ օրը Բերա ամերիկեան դեսպանատան մէջ համախմբուեցան, իրենց վշտակցութիւնն արտայայտելու համար Կրանթ զօրավարի մահուան առթիւ : Ընդ. հիւպատոս Պ. Հիթ գումարման նպատակն յայտնելով, Տօքթ. Վուտ ընտրուեցաւ նախագահ . պարագային յարմար աղօթք մը յետոյ, բանաձեւ մը խմբագրուեցաւ Միացեալ Նահանգաց հանգուցեալ նախագահին ընտանեաց ուղղուելու համար ի դիմաց գաղթականութեան :

Ապա, ամերիկեան դեսպան Պ. Քօքս պերճաբան լեզուաւ պատմեց Կրանթ զօրավարի կեանքն . խօսեցան նաեւ Եգիպտոսի ամերիկեան նախկին հիւպատոս Պ. Լէօն, ուսուցիչ Պ. Միլինճէն և փաստաբան Բլիֆթըն :

Ներկայից մէջ կային բաց ի Ամերիկայի հպատակաց երեւելիներէն, Թըրօթթըր հազարապետը, Վուտ փաշա, Պէրտան զօրավարն, Ազարեան և Մինասեան էֆէնտիք :

* * *

Մանասթըրի, Տրամայի և Գոսովայի դատական քննիչ Րէուֆ պէյ երկու ամսէ ի վեր սոյն վերջին քաղաքին մէջ կ'զբաղի դատարանաց քըննութեամբ :

* * *

Վերջին յուլիս ամսոյ մէջ ծխախոտի Րէժիի հասոյթն եղած է՝

Առաջին կիսամսեկի համար	Օ Լ.	65.000
Երկրորդ »	» » »	70,000

Գումար ամբողջ ամսուան 135,000 օսմ. ոսկի, մինչ անցեալ տարւոյ մի և նոյն ամսոյ հասոյթն եղած է 78,000 օսմ. ոսկի և 48.000 ոսկւոյ յաւելուած մը ցոյց կուտայ յուլիս ամսոյ վրայ :

* * *

Կը յիշուի թէ Առեւտրական Սենեկի և Անուղղակի Տրոց վարչութեան միջեւ խնդիր ծագած էր մաքսատուց տեղ վար դրուած ապրանաց վաճառման եղանակին նկատմամբ : Սակայն Առեւտրական Սենեակը փափաքելով որ այս աստիճան կարեւորութիւն ունեցող խնդրոյ մը կարգադրութիւնը չերկարաձգի թղթակցութեանց փոխանակութեամբ, առաջարկած է որ խառն Յանձնաժողով մը կազմուի իւր անդամներէն երեք հոգիէ և մաքսատան քանի մը պաշտօնատարներէ, որպէս զի երկու մարմնոց կարծիքները փոխանակելով համաձայնութիւն մը գոյանայ :

Այս առաջարկութիւն ընդունուած լինելով Անուղղակի Տրոց վարչութենէն, Յանձնաժողովն իւր առաջին նիստն ըրաւ շաբաթ օրը Մաքսատան մէջ :

* * *

Կ'ըսուի թէ Վճռաքննիչ Ատենի պաշտօնական ճիւղի անդամներէն Մաշէր պէյ Ադրիանուպոլսոյ դատական քըննիչ պիտի անուանուի :

* * *

Երէկ, կէս օրին մօտերը սոսկալի ոճիր մը գործուեցաւ Թօփ-գաբուի կողմը :

Ի Գարակէօմրիւկ սրճարանապետ Հաճի Յակոբի աշակերտ 18 ամեայ հայ պատանի մը Դանիէլ անուն՝ Եէնի-պաղչէ կոչուած թաղը ննջեցեալի մը գնացած պահուն, Գարապաշ կոչուած ամայի փողոցի մ'առջեւ Քիւչիւք Ալիի կը հանդիպի : Քիւչիւք Ալի արհեստին մէջ վարժ, հանրածանօթ աւազակ մը և ոճրագործ մ'էր . դեռ ամիս մ'առաջ լրացուցած էր իւր վերջին դատապարտութիւնն և կ'երեւի թէ կարօտցած էր բանտային կեանքը . սպառնալից կանգնեցաւ Դանիէլի դէմ և գանգատեցաւ որ երբ իրենց սրճարանը կ'երթայ, չեն մեծարեր զինքը . երիտասարդն՝ անգէտ իրեն սպառնացող վտանգին, մեղմութեամբ պատասխանեց թէ իւր վարպետին գիտնալիք բանն էր այդ . Քիւչիւք Ալի քանի մը ամօթալի խօսքերէ յետոյ, խոշոր դաշոյն մը հանեց քովէն ու Դանիէլի կուրծքը մխելով, մէկ հարուածով անկենդան գետին փռեց խեղճը : Դանիէլի երկու ընկերներն, որք վրայ հասած էին, իրենց կեանքն ալ վտանգի մէջ տեսնելով, կը փախչին սպանելոյն տանը կ'երթան և ահռելի դէպքը կը պատմեն . յուղարկաւորք կը փութան սպանման վայրն և Դանիէլի մարմինը Գարակէօմրիւկի եկեղեցին կը փոխադրեն :

Այս պահուն, Քիւչիւք Ալի անփոյթ և աներկիւղ Հաճի Յակոբի սրճարանը կ'երթայ և խիստ սպառնալիքներ կ'ուղղէ սրճարանապետին . գուցէ յանդգնէր իսկ երկրորդ ոճիրն, եթէ յաճախորդաց մէջ գտնուող Թահսին անուն ոստիկան մը չը սաստէր և [illegible] հալածել զայն : Մարդասպանն այսպէս մէկ ժամէ աւելի Թահսինի այս կողմէ հալածուելէ յետոյ, Էսքի Ալի փաշա թաղին մօտ կը կորսնցնէ ազատման ամեն յոյս, ինքզինքը պաշարուած տեսնելով ուրիշ երեք ոստիկաններէ : Ասոնք էին Սամաթիոյ ոստիկան Բաղիզ աղա, և Հիսնի ու Հասան անուն ուրիշ երկու ժանտարմայք : Քիւչիւք Ալի վերջին ճիգ մ'ալ կ'ընէ ձեռքը տանելով այն դաշոյնին, որ դեռ տաք էր Դանիէլի արեամբ . սակայն Բաղիզ աղա հրացանին կոթովը բուռն հարուած մը կ'իջեցնէ Ալիի ուսին և ուշաթափ գետին կը փռէ զայն . ապա վրան յարձակելով, կը ձերբակալեն ու ձեռքերն երկաթի զարնելով ուղղակի ոստիկանութեան բանտը կը տանին :

* * *

Թողեալ հինգ հասութից վերջին յուլիս ամսոյ հասոյթն եղած է ընդհանուր հաշուով մը 187.916 ոսկի : Այս գումարին մէջ են ծխախոտի Րէժիի կողմէ վճարեալ եռամսեայ հարկը 62.500 ոսկի, և Արեւ. Րումէլիի հարկը՝ 15.416 ոսկի : Իսկ 1884 տարւոյ նոյն ամսոյ հասոյթն եղած է 155.247 ոսկի, ուստից կ'երեւի թէ ներկայ տարւոյս մէջ 32 669 ոսկւոյ հասութից աւելցութիւն մը կայ :

* * *

Առեւտրական Սենեկի պաշտօնական թերթն անհիմն կը գտնէ այն զըրոյց թէ Առեւտրական և Երկրագործական Նախարարութեան խորհրդական Նորտէնֆլիւքթ էֆէնտի մտադիր է հրաժարիլ օսմանեան ծառայութենէն : Այս զրոյցին առիթ տուող պարագայն սա կը կարծուի որ Նորտէնֆլիւքթ էֆէնտի վերջերս Պրուսիոյ պետական խորհրդոյ խորհրդականի պաշտօնին բարձրացաւ :

* * *

Հռոդոսէն կը գրեն առ Նէօլոկօս .

Հռոդոս կղզւոյն առջեւ գտնուող օսմ. պահակ շոգենաւն Հելլէն առագաստանաւ մը գրաւեց, որ փախցուած ծխախոտ բեռցած էր : Նաւապետն երկու նաւաստի դրաւ Հելլէն առագաստանաւուն մէջ և շոգենաւուն կապեց զայն . սակայն հազիւ քիչ մը տեղ յառաջացած էին, չուանք կտրելով, առագաստանաւը խոյս տուաւ : Չգիտցուիր թէ երկու նաւաստիք ինչ եղած են :

* * *

Փիլիպէէն կը գրեն թէ հելլենական ընդհանուր հիւպատոս Պ. Կէննատիոսի ծանուցեալ խնդիրը միշտ առկախ կը մնայ : Տեղական կառավարութիւնն ամեն յարաբերութիւն խզած է Պ. Կէննատիոսի հետ, հետեւաբար հելլէն հըպատակաց գործերն առկախ կը մնան :

* * *

Երէկ ժամ 3 ½ ին կամուրջէն մեկնող Շիրքէթի շոգենաւը Գապաթաշի առջեւ նաւակ մը ընկղմեց, որուն մէջ 6 հոգի կային, որք [illegible] և կըրցան ազատիլ լողալով :

Սէլանիկի կուսակալէն ներքին գործոց նախարարութեան ուղղեալ հեռագիր մը կը ծանուցանէ թէ Տէմիր Հիսարի զինուորական իշխանութիւնք յաջողեր են ձերբակալել երկու աւազակներ որք Սէրէզցի վաճառականի մը գրպաններէն 300 ոսկւոյ գումար մը կողոպտած էին ։

ԱԶԳ

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍ. ՊԱՆՔԱ

Կը ծանուցուի Բրիորիթէի օսմ. արժէթուղթ ունեցող անձանց թէ թիւ 7 կտրոնն և վերջին վիճակահանութեան շահող արժէթղթերը պիտի վճարուին ի գրասենեակս Օսմ. կայսերական Պանքայի Պոլսոյ ճիւղին, Թարագճըլար փողոց, սկսեալ յառաջիկայ 1/13 սեպտեմբերէն ։

Կտրոններուն և արժէթղթոց պէտք է կցուին նաև թուական ցուցակ մը (պօրտըրօ) և պիտի ընդունուին ամեն շաբթու, երեքշաբթի և ուրբաթ ։

Կ. Պոլիս, 17 օգոստ. 1885

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ԱԺԱՆՍ ՀԱՎԱՍ

Փարիզ, 17 օգոստ.

Երէկ տեղի ունեցաւ ի Ման, խուռն ամբոխի մը մէջտեղ, զօրավար Շանզիի 'ւ Լուարի բանակին ի պատիւ կանգնեալ յիշատակարանին մերկացումը։ Պատերազմական նախարարն և իւր պաշտօնակիցներէ մի քանին ներկայ էին այս հանդէսի, որ հիասքանչ եղաւ ։

Հայրենասիրական բազմաթիւ ճառեր արտասանուեցան ։

Աղեքսանդրիա, 17 օգոստ.

Աղեքսանդրիոյ ռմբակոծման և հրկիզման տուգանաց վճարումն այսօր պիտի սկսի ։

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 6 Օգոստոս

Այսօր յունաց տօն լինելուն պորսան գոց է ։ Բերայի մէջ գոնսօլիտէն 18 ղրշ 16 1/2

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 17 Օգոստոս, ժամ 3 վայր. 15 երեկոյ

Անգլ. քօնսօլիտէ	100 1/4
Օսմ. » Սէրի Դ. բացուեցաւ	16 11/16
» » » գոցուեցաւ	16 11/16
» » » Ա.	33 3/4
» » » Բ.	18 7/8
» » » Գ.	16 5/8
Օթօման 1871	71
Փոխառութիւն 1877	84
Պանք Օթօման	11 3/8
Ռուսական փոխառ. 1873	93 3/4
Եգիպտական միացեալ (իւնիֆիէ)	66 1/2
» առանձն. (բրիվիլէժիէ)	90 1/8
Տայրա Սանիէ	63 3/4
Տօմէնիալ (փոխառ. Րօչիլտ)	87
Հանգստական պարտաթուղթ 4%	— —
Փոխանակութիւն Բարիզի վրայ	— —

Վիեննա, 17 Օգոստոս, ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	125 00
Օսմանեան երկաթուղի	20

ՄԱԿԱՐ ՍՐԲԱԶԱՆ

Ամեն. Մակար Սրբազանի մասին հետեւեալ տեղեկութիւններն հրատարակուած լինելով «Մասիս» շաբաթաթերթի 1885 Յունուար 12ի թուոյն մէջ, աւելորդ չենք համարիր արտատպել զայնս ։

84 մայիս 5ին Էջմիածին գումարեալ Ազգ. ժողովը կատարած էր իւր առաջին կէս պաշտօնական նիստը և մերժած էր Ներսէս Սրբազանի հրաժարականը, երբ նոր հասած էի Էջմիածին ։ Զանազան տեսակցութիւններէ վերջ, երեկոյեան դէմ փափաքեցայ կատարել քաղաքավարական պարտականութիւնս և 'ներկայանալ կաթողիկոսական տեղակալ Ամեն. Մակար Սրբազանին ։ Բաւական ժամանակէ ի վեր այդ անունը մեծ դեր կը կատարէր առ մեզ, թէպէտ կարծեմ անգործ դեր ։ Ամենուրեք կը խօսուէր Մակար Սրբազանի վրայ ։ Թրքահայք ցաւ մը չպիտի զգային եթէ Նորին Սրբազնութիւնը բարձրանար ի գահ կաթողիկոսական, իսկ Ռուսահայք կ'ունենային բուռն ցոյց մը եթէ պատահէր այդ իրողութիւնը ։ Կարծեաց այս տարբերութիւնը, մեր և Ռուսահայոց միջեւ, զգալի ապացոյց մ'էր թէ ո՛րչափ անծանօթ էին մեզ. նոյն իսկ ամենակենսական խնդրոց մասին, Ռուսահայոց միտումները ։ Մեծ հետաքրքրութեան մէջ էի. ներկայանալու պատիւը վայրկեան մ'առաջ կ'ուզէի ունենալ ։ Ըստ սովորութեան հիւրընկալ Հայրն հաղորդեց փափաքս Նորին Սրբազնութեան և հաճութիւնն ստանալով պատրաստուեցայ ընկերանալ Հայր Սուքիասին ։ Կ'ուզէի մի քիչ արդուզարդ ընել, և երկու օրերու մէջ հաւաքած փոշիներուս հետքն իսկ չպահել. բայց ներկայք աւելորդ աշխատութիւն համարեցին զայս ։ Թէպէտ ես ունկն չդրի նոցա և ըրի ինչ որ պէտք էր ընել, բայց վատ տպաւորութիւն մը գործեցին վրաս այն շարժումներն յորոց կարելի էր գուշակել թէ՝ հնարաւոր էր ներկայանալ Հայոց կաթողիկոսութեան տեղակալին այնպիսի վիճակի մը մէջ որով չենք կրնար այցելել ուրիշ բարձրագոյն տեղեր ։ Այսպիսի դէպքեր թէպէտ առ երեւոյթ ոչինչ կ'երեւին, բայց պէտք չէ արհամարհել զայնս ։

Պարտ ու պատշաճ վայելչութիւնք յարգանաց առաջին ապացոյցն է ։ Բաց ատի կարծեցի թէ Հայոց Մայր-Վանուց մէջ մաքրութիւնն անհրաժեշտ պէտք մը համարուած չլինի ։ Շատերնիս չենք կարող ըմբռնել թէ՝ անհատ մը, ընկերական հաստատութիւն մը, կարող լինի յառաջադիմել եթէ չտիրէ նորա վրայ ամենակատարեալ մաքրութիւն ։ Բայց երկիւղս շուտ անհետացաւ ։ Մանուածապատ ճանապարհներէ անցնելով, փայտաշէն խարխուլ դռներէ և սեմերէ անցնելով կը մտնենք փոքրիկ սենեակ մը, մաքուր, սիրուն, կոկիկ, զարդարուած պարսկական գորգերով, ամեն հանգստութիւն ընծայող նստարաններով ։ Դռնէն ներս մտած ժամանակ ձախ անկիւնը փոքրիկ գրասեղան մը կայ ։ Գրասեղանին առջեւն է մի ծերունի եկեղեցական, մօրուքը ճերմակ բայց ոչ վեհափառ, այլ ցանցառ ։ Կարմիր այտեր, արծուենգն քիթ մը բոլորովին հայկական, երկու աչքեր որոց խորը թափանցել դժուար է և որք աւելի կ'ախորժին վար նայիլ քան թէ ուղիղ աչքերուդ մէջ. այսպէս կը պատկերանայ Հայոց կաթողիկոսի տեղակալը ։ Հասակը երկայն է, թէպէտ քիչ մը կորացած, մարմինը չոր. ծերունին եկեղեցականը առոյգ է և կայտառ ։ Ձայնը լաւ է բայց չոր, և աւելի խաղաղ լինելու կը հակի ։ Հատիկ հատիկ կը խօսի և կարծես թէ կ'ուզէ մտածել արտասանելիք իւրաքանչիւր բառին վրայ ։ Գեղեցիկ, մաքուր զգեստներ հագած է և գլուխը թաւիշէ [illegible] կը կրէ ։ Կատարեալ մաքրութիւն մը կը փայլի Սրբազանին դիմաց և զգեստներուն վրայ. բիծ մը գտնել անհնար է որքան ալ ուշադիր նայիս. կարծես թէ Նար-պէյ Խորէն Սրբազանն է, ծերացած ։

Ցորդանօք համբուրեցի Սրբազանի աջն և նստայ իւր մօտը աթոռին վրայ ։ Բաւական փափուկ կացութեան մէջ էի ։ Երկար տարիներ աշխատակցած էի թերթի մը որ շատ հեռի էր Մակարեան լինելէ. իսկ այժմ կը ներկայանայի Պոլսոյ հայ թերթի մը որ տուած էր անուղղակի կերպով ամենածանր հակառակը Մակար Սրբազանի կաթողիկոսութեան ։ Վիճակիս ծանրութիւնը զգալով հարկ էր որ քան զվորականն աւելի քաղաքավար, անուշ լեզու և ժպտուն դիմօք լինէի ։ Մեր խօսակցութեան նիւթերն էին նոյն օրուան դէպքերը, Պոլսոյ Ազգային ժողովոյ ընթացքը, լրագրաց ուղղութիւնք, Թուրքիոյ Հայոց արդի կացութիւնն ։ Ի հարկէ լուռ կ'անցնէինք այն պարագայն որով Ազգ. ժողովն իւր երեք ընտրելեաց մէջ չէր դասած Նորին Սրբազնութիւնն ։ Այս մերժումը շատ դէշ ազդեցութիւն ըրած էր Նորին Սրբազնութեան և իւր բարեկամաց վրայ, իսկ ընդհակառակն լաւ տպաւորութիւն գործած էր հակա-Մակարեան բանակին վրայ ։ Մեր Ազգ. ժողովն առաջին ընտրելի ընելով Ներսէս Սրբազանն, և մերժելով Մակար Սրբազանն ընտրելեաց ցանկէն, շատ յանցանքներ քաւած էր յաչս Ռուսահայոց ։

Մակար Սրբազան յոյժ քաղաքավար սիրալիր ընդունելութիւն ըրաւ, ինչպէս վայել էր մեծ աթոռի մը տեղակալին ։ Թէյերն իրարու կը յաջորդէին և կը խօսակցէինք ։ Նոյն պահուն անդ եկաւ նաև բրոֆէսէօր Պ. Ներսէսեան ։ որով մեր խօսակցութիւնք մի քիչ աւելի կենդանութիւն առաւ ։ Ի մէջ այլոց Մակար Սրբազան խորին ցաւ կը յայտնէր այն կէտին վրայ թէ Թուրքիոյ Հայք կարող չեն եղած մինչեւ ցարդ որոշել իրենց ուղղութեան գիծ մը և թէ ամէն գործի մէջ կը մտնեն [illegible]: «Ամեն ինչ կիսակատար կը թողուք, կ'ըսէր. այսօր այս կ'ընէք, վաղը զայն կը թողուք ուրիշ բանի մը կը ձեռնարկէք. յուսանք թէ, կ'ըսէր, «Արեւելք» հետամուտ լինի այս չարեաց առաջն առնլու ։» — Մակար Սրբազան իրաւունք ունէր. ինչ որ իրաւացի է, խոստովանելու է. սակայն [illegible] այնքան արմատացած է մեր սովորութեանց մէջ որ կարծենք թէ շատ դժուար պիտի լինի, չըսենք անհնարին, այդ սովորութիւնն արմատախիլ ընել մեր բարուց մէջէն ։

Կաթողիկոսական ընտրելոյն վրայ կը փափաքէի Նորին Սրբազնութեան կարծիքն իմանալ, բայց ժպտելով ըսաւ. «Ինչ որ ըսեմ, անմիջապէս պիտի հեռագրես, ուստի զգոյշ կը կենամ» ։ — Խօսքը կատակի փոխեցինք, բայց մակաբերեցի թէ արդէն կը խորհէր մեծ որոշում տալ. այդ կ'երեւէր իւր ժպտելու եղանակէն ։ Ապագային մէջ տուաւ այդ որոշումը, որ այնքան պատուաբեր եղաւ իրեն համար ։

Ետ այս խօսակցութեանց՝ աջն համբուրելով Պ. Ներսէսեանի հետ մեկնեցանք ։

Ինչ որ ալ լինին մեր կարծիքները կաթողիկոսական ընտրելոյ մասին, չենք կրնար ուրանալ որ Մակար Սրբազան լաւ տպաւորութիւն կը թողու անոնց վրայ որք պատիւ ունին Նորին Սրբազնութեան հետ տեսակցելու ։ Ակներեւ կը տեսնուի թէ խորհող անձ մ'է, լրջմիտ և խոհեմ. միայն թէ խոհեմութիւնը գուցէ այն աստիճանի կը հասցնէ, որ այլ եւս խոհեմութիւն անունը չկրէ ։ Անտարակոյս նորա ազգասիրական զգացումներն և ընդունակութեան սահմանը կարելի չէր լաւ հասկնալ կէս ժամուան տեսակցութեան մը մէջ, և այս մասին հարկ էր լաւ հետամուտ լինիլ թէ ինչ կը խօսուի ամենուրեք ։ Առանց ո՛ և է աշխատութեան կարելի է շուտով ի միտ առնուլ թէ Ռուսիոյ Հայոց համար ամենամեծ դժբաղդութիւն մը պիտի լինէր այն օրն երբ Մակար Սրբազան Հայոց կաթողիկոս ընտրուէր ։ Նորին Սրբազնութեան դէմ արտաքոյ կարգի հակակրութիւն կայ Ռուսիոյ Հայոց ամէն դասերուն մէջ ։ Չեն ուրանար Մակար Սրբազանի զանազան կարգի արժանիքն. բայց երբ կաթողիկոս բառը կ'արտասանես նորա համար, կարծես սարսուռ կ'զգան ։ Ո՛չ մէկ գաւառ ընտրեց Մակարեան պատգամաւոր մը. ո՛չ մէկ թերթ համարձակեցաւ պաշտպանել Նորին Սրբազնութեան ընտրելութիւնը ։ Միայն Մեղու Հայաստանի Մակարեան կը համարուէր, բայց պահպանողական թերթը զգաց թէ ամենամեծ յանդգնութիւն մը ի գործ դրած պիտի լինէր եթէ արտասանէր Մակար Սրբազանի անունը. հետեւաբար զգոյշ կեցաւ այս անխոհեմութիւնն ի գործ դնելէ ։

Ինչո՞ւ այսքան հակակրութիւն ընդդէմ Մակար Սրբազանի. — Պատճառները բազմադիմի էին. Նորին Սրբազնութեան անցեալը գեղեցիկ յանձնարարականներ չընծայեր ներկային համար, ըստ վկայութեան Թիֆլիզի և Երեւանու ամենէն նշանաւոր անձանց ։ Ներկային մէջ թոյլ կը համարուի, չափազանց [illegible] ։ Օրինակ իմն. հանգուցեալ կաթողիկոսը իւր օրովը բաւական բարեփոխած էր մաղթանքը ։ Մաղթանքը մի աղօթք է Ռուսիոյ կայսերական ընտանեաց համար, զոր պէտք է արտասանեն ժողովուրդք և եկեղեցականք ծնրադիր և գլխաբաց ։ Անտարակոյս Էջմիածին չի հակառակիր Ռուսիոյ կայսերական ընտանեաց համար աղօթել. բայց պէտք է որ այս աղօթքը լինի ըստ սովորութեանց Հայաստանեայց եկեղեցւոյ ։ Հանգուցեալ կաթողիկոսը ջնջած էր մաղթանքէն այն ամէն բացատրութիւններն և ձեւակերպութիւններն որք չէին համապատասխաներ մեր եկեղեցական աւանդութեանց ։ Երբ Մակար Սրբազան տեղապահ եղաւ՝ կառավարութիւնը կը պահանջէր որ մաղթանքը վերահաստատուի ըստ առաջնոյն ։ Մակար Սրբազան կը համարձակի վերահաստատել ինչ որ կաթողիկոս մը ջնջած էր ։ Այս մէկ դէպքը բաւական եղած էր վերջին ժամանակներս որ սաստկանան ընդդէմ Մակարի ատելութիւնները ։

Մակար Սրբազան ո և է ազդեցութիւն չունի վանուց մէջ ։ Կաթողիկոսական ընտրութենէ վերջ մեկնեցաւ ի Բջնի, անխնամ թողլով Աթոռն և նորա պատկանող ամէն կարգի կենսական շահերը ։ Մակար Սրբազան իւր անձնական առողջութիւնը պատճառելով մեկնած է, բայց ստոյգ աղբիւրներէ տեղեկութիւնք հաստատեցին յետոյ թէ իւր հեղինակութիւնն այնքան տկարացած էր որ զգացած էր թէ այլ եւս կարող չպիտի լինի ի գործ դնել իւր իշխանութիւնը պարտ ու պատշաճ եղանակաւ ։

Եթէ Էջմիածին գտնուէր սովորական վիճակի մէջ, եթէ հարկադրեալ չլինէր մաքառիլ արտաքին և ներքին թշնամեաց դէմ, եթէ ամէն գործեր կանոնաւոր վիճակի մէջ լինէին, այն ատեն Մակար Սրբազան կարող էր բաւական լաւ կաթողիկոս մը լինել ։ Բայց մեր արդի վիճակը տարբեր է. բազմաճիւղ խնդիրներ կան լուծելու. մեծամեծ բարեկարգութիւններ կան ի գործ դնելու. և այդ ամէնն ի գլուխ հանելու համար անհրաժեշտ է որ Հայոց կաթողիկոսը ո՛չ միայն օժտեալ լինի մեծամեծ յատկութիւններով, այլ և Ազգին, մանաւանդ Ռուսահայոց սէրն ու համակրութիւնը վայելէ ։ Ո՛չ մէկ կաթողիկոս կարող է օգտակար լինիլ Ազգին, եթէ իւր բարոյական իշխանութիւնը չէ յենած հաստատ ժողովրդականութեան վրայ ։ Այս մտածութիւններէ առաջնորդեալ գործեց Էջմիածնայ Ազգ. ժողովն, և Մակար Սրբազան լաւ ըմբռնած էր այս ճշմարտութիւնը, թէպէտեւ մի քիչ ուշ ։

Կաթողիկոսական ընտրութիւնը կատարուելէ վերջ երբ պիտի մեկնէի Էջմիածնէն, վերստին ներկայացայ Մակար Սրբազանին, ընկերակցութեամբ Պարսկաստանի պատգամաւոր Պ. Հ. Առաքելեանի ։

— «Տեսա՞ք հիմա, ո՞վ եղաւ կաթողիկոս», ըսաւ Մակար Սրբազան ժպտելով, երբ սենեակէն ներս մտայ ։

Ետ այնորիկ Սրբազանը մեծամեծ գովեստիւք խօսեցաւ Ներսէս կաթողիկոսի մասին, յայտնելով թէ պատրաստ է իւր բոլոր օժանդակութիւնը նուիրել Նորին Վեհափառութեան ։

Յայտնեցի Մակար Սրբազանին թէ՝ Ներսէս Սրբազան միշտ համակրանօք կարծիք յայտնած է ամենուրեք Նորին Սրբազնութեան մասին և թէ ընդհանրապէս Թուրքիոյ Հայք ո՛ և է հակառակութիւն չեն ունեցած իրեն դէմ ։ «Սակայն, Սրբազան, աւելցուցի, պէտք է խոստովանիմ որ Ռուսիոյ մէջ տրամադրութիւնները բոլորովին տարբեր գտայ. ամենուրեք ժողովուրդը անխտիր հակառակորդ է Ձեր Սրբազնութեան և միայն Ներսէսը կ'ուզէ» ։

Երբ այս բառերն արտասանեցի, Պ. Հ. Առաքելեան այնչափ երեսս կը նայէր. ինքն թէպէտ ջերմ համամակարեան մ'էր՝ կը զարմանար թէ ի՞նչպէս կարելի էր այս աստիճան առաջ երթալ ։ Մակար Սրբազան ինքն ալ զարմացաւ ։ Բայց ես իմ յատուկ նպատակս ունէի այս խօսքերն արտասանելով. միանգամայն կը մտածէի թէ ամենուս պարտականութիւնն է բերանացի թէ գրաւոր հաղորդել հասարակաց կարծիքն անոնց որք այդ հասարակութեան հետ գործելու պարտական են ։

Մակար Սրբազան ի հարկէ գոհ մնաց երբ ըսի թէ Թուրքիոյ Հայք իրեն դէմ գժգոհութիւն մը չունին, և այս գոհունակութիւնը իւր դիմաց վրայ կը տեսնուէր. իսկ երբ խօսեցայ Ռուսիոյ Հայոց մասին, մի քիչ դէմքը խոժոռեցաւ և ըսաւ ։

— «Ժողովուրդը ի՞նչ յանցանք ունի որ այս ինչը կը սիրէ և այն ինչը չսիրեր. պատճառը ասա՛ ասոնք են» ըսաւ և մատնիչ ըրաւ սենեակին մէջ գտնուող եկեղեցականներն ։ — Այդ խօսքերը բաւական մեկնութեան կարօտ էին և ես կ'ենթադրեմ թէ Մակար Սրբազան կ'ուզէր ըսել թէ եկեղեցականք ընդդէմ իրեն տարածում կ'ընեն ժողովրդին մէջ ։

Պ. Առաքելեան և ես նոյն պահուն պիտի մեկնէինք Էջմիածնէն. ուստի չէինք կարող երկարել մեր տեսակցութիւնը Մակար Սրբազանի հետ ։ Համբուրեցինք աջն և մեկնեցանք ։

Շատ գոհ էի որ կարող եղայ ի մօտոյ ճանչնալ այսպիսի անձնաւորութիւն մը. աւելի գոհ էի որ բաւական լաւ գաղափար մ'ունեցայ Նորին Սրբազնութեան վրայ. իսկ ամենուն հետ շատ աւելի գոհ էի որ այնքան ազնուութեամբ հրաժարեցաւ կաթողիկոսական ընտրելութենէ և փակեց բաւական չարեաց դռներ ։— Իղձ՝ թէ մեր արդի ընտրութեանց կարեւոր օրերու մէջ ունենանք Մակար Սրբազանի օրինակին հետեւողներ ։ Եթէ իրենց պէտքն զգալի է, Ազգը կարող է առնել զիրենք բռնութեամբ յաթոռ Պատրիարքութեան կամ Կաթողիկոսութեան ։—

«Մասիս» Թիւ 3752 — Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ

ԲԺՇԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ահա գիտութիւն մի որ անտարակոյս քաջածանօթ չէ ամենուն որովհետեւ դեռ այնչափ հին չէ, բայց որուն հետ դիւրաւ պիտի ընտանենան «Արեւելք»ի ընթերցողներ թէ ուզեն մեզ ընկերանալ Տօքթ. Պօրտիէի մէկ խիստ հետաքրքրաշարժ գործէն համառօտ քաղուածքներ ընելու ։ Բայց նախ ի՞նչ է Բժշկական Աշխարհագրութիւնը ։

Մեր երկրին մէջ, մեր հողին վրայ, մեր երկնից ներքեւ, մեր ընկերութեան, մէկ բանով մեր մէջ տեսնուած երեւոյթները, ուրիշ երկիրներու նոյն կարգի երեւոյթից հետ բաղդատել անհրաժեշտ պէտք մ'եղած է զոր մասամբ լցուցած են բնական, քաղաքական, առեւտրական և այլ աշխարհագրութեամբք որոց իւրաքանչիւրին անուան տակ մասնաւոր տեսակէտով մը կը ներկայանայ մեր աչաց երկիրս և զորս ամէն ոք քիչ շատ ուսած է դպրոցական եղած ատեն ։ Բժշկական գիտութիւնն ալ, որ բնական գիտութեանց ամբողջութիւնը կրնայ համարուիլ, չէր կարող յապաղիլ, մինչ եւ ճանապարհորդութիւնք այնքան դիւրացած են և հետազօտիչք այնքան բազմացած, ամենամեծ օգուտներ քաղելու աշխարհագրական գիտութենէն, որով և ծնունդ կ'առնուր բժշկական աշխարհագրութիւնն որոյ առ բժիշկս մատուցած ծառայութիւնք անհամար են ։

Բժշկական աշխարհագրութիւնը պարզապէս կը սահմանուի հիւանդութեանց երեւման, ընթացքին և բաժանմանց վրայ. կլիմային և ցեղին ազդեցութեան գիտութիւնն է ։

Սկիզբն բնականաբար մարդուս արտաքին տարերց ուսումնասիրութեամբ որոյ անուանակարգութեան մէջ պիտի տեսնենք ոչ միայն մթնոլորտն և երկիրը, այլ և անասնոց և բուսոց նկարագիրն որոց մէջ մարդ կը մերձի և մրցած է նախ քան հասնիլ, նոյն իսկ իբրեւ ստրուկ, այսօր իբրեւ տէր, նա մանաւանդ Բասթէօրի և Քօխի աշխատութիւններով լուսաւորեալ իւր ամենէն բաղդակից, ամենէն փոքր և հետեւապէս ամենէն ահագին թշնամիները ճանչնալ և զանոնք նուաճել ու կոտորել սովրելէն ի վեր ։

Ճանապարհորդի մը, որ երկրէ յերկիր կ'երթայ, ամէն բանէ յառաջ իւր տեսած երկիրներուն ջերմութեան աստիճանին փոփոխութիւնը զգալի կ'ըլլայ, ինչ որ միջնավայրի փոփոխութեանց կարեւորագոյններէն մին է թերեւս՝ որոյ ենթարկեալ են մարդս, համայն կենդանիք և բուսեղէնք ։

Սառին ձկներն ինչպէս միկրօպներն որք այնքան արագութեամբ կ'աճին և կը բազմանան, ջերմութեան համեմատութեամբ կ'ընծայուին ։ Շատ մը հիւանդութիւնք կը ծագին արեան մէջ [illegible] և մանրադիտական էակաց բազմանալէն որք կ'ապրին հոն իբրեւ ճշմարիտ պատուաստուորդք. բայց որք շատ անգամ այս միջնավայրէն դուրս տարբեր ձեւի տակ կ'ապրին [illegible] սպասուած առիթը ներկայացած չէր ։

Միջնավայրի ջերմութեան աստիճանին համեմատ նոյն իսկ կենդանի տարրի մը մասնաւոր հանգամանքները լիովին կը փոփոխին ։ Սկովտիոյ մէջ խնդակաթը (պալտըրան) գրեթէ թոյն չպարունակեր ։ Գոլլա [illegible] կոչուած խոտ մը որ մահացու թունաւոր է, ցուրտ երկիրներու մէջ կերակուր կը ծառայէ ։ Մինչ նոյն տեսակ օձի մը թոյնը նուազ գործօն լինիլ կը թուի ցուրտ քան տաք կլիմաներու ներքեւ ։ Գորտը կաթնասնաց արեան +37° ջերմութիւնը չէ կարող տանիլ և կը նուաղի. տաքարիւն կենդանիք նոյն իսկ իրենց բնական ջերմութենէն շատ աւելի բարձր աստիճանի մը չեն կարող տոկալ ։ Ուրեմն իւրաքանչիւր անհատի համար ջերմութեան դիմադրութիւնը կը փոփոխի. Պարոնայք տը Լառօչ և Պէռժէ զիրենք բարձրաստիճան ջերմութեան ենթարկելով Պ. տը Լառօչի անկարելի եղաւ +58°էն աւելի անդին մնալ իւր փուռին և հիւանդացաւ. Պ. Պէռժէ թէթեւապէս յոգնեցաւ և հետզհետէ աստիճանները բարձրացնելով +88°ի հասաւ ուր 7 վայրկեանէն աւելի չկարողացաւ մնալ սակայն ։

Ջերմութեան ազդեցութիւնը շատ աւելի մեծ է երբ աստիճանաց փոփոխութիւնը մեծ և անմիջական է. ամեն ոք տեսած կամ լսած է արեւահարութեան ինչ լինելը ։ 1743ին Բէքինի մէջ ջերմաչափը +40 աստիճանն անցնելով 11400 անձինք մեռան ։ 18-9ին ի Պարսից ծոցի մէջ +50° տաք ընելով հարիւրաւոր անձինք արեւահար եղան ։ 1874ին Լիվըրփուլ շոգենաւը Կարմիր ծովու վրայ երկու աւուր մէջ կորսոյ 3 ոգի և 21 նաւաստի ։ Եւրոպայի մէջ ալ նմանօրինակ պատահմունք թէեւ անհամեմատ կերպիւ փոքր թուով, պակաս չեն ։ 1859ի ամառը նշանաւոր եղաւ, յորում Պէլճիքայի մէջ գունդ մը զօրաց երկու երրորդն արեւահար եղաւ տեղափոխութեան մը միջոցին ։

Պէտք չէ սակայն միմիայն ջերմութեան վերագրել այս բան, հապա նաեւ օդոյ անփոփոխ մնալուն ինչպէս կը պատահի խիստ ջերմ օրերու մէջ. մթնոլորտային արեւահարութիւնը հեռի է միշտ մահացու ըլլալէ և 26 % միայն զոհեր կ'ընէ ։

Այլ է ջերմութեան ազդեցութիւնը տաք երկիրներու մէջ. Եւրոպացի մը որ տաք երկիրներ կ'երթայ, երկու գործարանքն ամենէն առաջ կը կրեն ջերմութեան ազդեցութիւնը, մորթն ու թոքերը որք ուղղապէս կը հաղորդուին օդոյն հետ ։ Մորթն այն աստիճան կը չափազանցէ իւր պաշտօնին մէջ որ խեղճ նորեկը տեսակ մը վէրքեր կ'ունենայ, յորմէ լաւ կը ճանչնան [illegible] Արեստանի և Արաբիոյ կողմերը գնացողները ։ Շնչառութիւնը կ'արագանայ, զօրութեան և գրգռման զգացում մը [illegible], մարմնոյն ջերմութիւն 1էն մինչեւ 2 աստիճան աւելի կը բարձրանայ, բազկերակը նմանապէս կ'արագանայ. բայց ինչպէս [illegible] կ'ըսէ, յարգի բոց մ'է այս որ շուտով կը մարի. ախորժակը կը թուլնայ, [illegible] շուտով կը տիրեն. շնչառութեան արտաշնչումը ոչ միայն կը դադրի այլ և առաջինէն ալ աւելի կը յամրանայ որով և թոքերու պարունակութիւնը նոյն իսկ կը նուաղի 376 խոր. հարիւրերորդամետրի չափ ։

Վերջապէս մասնաւոր վիճակագրութեան մ'ալ համաձայն կը թուի թէ մահկանացութիւնը կ'աւելնայ քանի որ հասարակածին կը մերձենանք. Մարթինիքա 14°, 44' լայնութեամբ 28 բնակիչներէ 1 մահ, Թրինիտատ 10°, 10' ով 27էն 1 և Պաթավիա 6°, 10' ով 26ին վրայ 1 մահ կուտայ ։ Այս վիճակագրութեան թերութիւնը սա լինել կը թուի թէ հաշւոյ առնուած չեն ցեղի և կլիմայի տարբերութիւններն որք լայնութեան աստիճանէն անկախ են բոլորովին, սակայն ընդհանուր առմամբ իւր ուղղութիւնը բաւական ճշմարիտ է ։

Ջերմութեան սաստկութենէն յետոյ, ցրտառութիւնն է որ հիւանդութեանց սովորական պատճառ կը լինի արեւադարձական երկիրներու մէջ. դժուարաւ մարդս ճառագայթման կը խնամէ հոն, ինչու որ իւր մարմինը նուազ ջերմութիւն յառաջ կը բերէ ։ Ահա ինչ պատճառաւ մանր տղայք տաք երկիրներու մէջ այնչափ դիւրաւ կը մեռնին, մանաւանդ հոն ուր հագուստ չունին ։ Ընդհանուր առմամբ ջերմութիւնը կը մեռցնէ տղան ինչպէս ցուրտը ծերունին ։ Տօքթ. Վուլէի [illegible] ցուցակէն յայտնապէս կ'երեւի թէ ո՛ր աստիճանի համեմատական է տղայոց մահը ջերմութեան աստիճանին հետ ։ Սոյն ցուցակին երկու ծայրագոյն թիւերն առնունք, 1853ի և 1859ի ամառներն, որոց առաջնոյն ջերմութեան միջին աստիճանն է 17°, 7 և երկրորդինը 20°, 3. արդ 0էն 1 տարեկան տղայոցմէ առաջին տարին մեռած են 32 %, իսկ երկրորդ տարին 93 % (°.) Գալով ջերմութեան ազդեցութեան ընկերական շրջափոխութեան վրայ, տաք երկիրները մարդուս ամենադիւրին կեանք մ'ընծայած են միշտ. անասունք և բուսեղէնք առատ են հոն և եթէ միայն և միայն մէջ բազմաթիւ թշնամիներ ունի նա, կը գտնէ նմանապէս եթէ ոչ միշտ բարեկամներ գէթ իւր նոյնութիւնը յագեցնելու չափ նիւթ առանց չափազանց յոգնեցնելու իւր անձը ։ Ահա ինչ պատճառաւ մտաւոր դրութիւնը ըստ բաւականին զարգացած չէ. ընկերական շրջափոխութիւնը եւ տաք երկիրներու մէջ է ընդհանրապէս որ ընկերութիւնք շրջափոխութեան ստորնագոյն աստիճանի մը վրայ կանգ առած են ։ Մկանային դրութիւնն ալ այս երկիրներու մէջ զերծ չմնար նուաղումէ. միայն ջղային զգայական դրութիւնը կը տիրապետէ անդ։ Իրենց բարբարոսութեամբ տակաւին կոյս ազգեր այս կողմանէ մի և նոյն թերակատարութիւնը ցոյց կուտան զոր ունին քաղաքակրթութեան մէջ բարակցած մեր պարանայք ։ Վիրէյ որ սոյն դիտողութիւնն ըրած է, ջլատելով այն պատկերը ուր ջերմութենէ ծագած ջլատութիւնը մերձեցուցած է քաղաքակրթութենէ ծնած ջլատութեան, [illegible] «Մարդկային հասարակածի գօտին» ։

Նմանապէս բարեխառն կլիմայէ մը հեռանալով դէպ ի հիւսիսային լայնութիւնները գնացող ճանապարհորդ մ'ալ ոչ նուազ կարեւոր փոփոխութիւններ կը կրէ ։ Հոն ալ նկարագրեալ երեւոյթից հակառակը պարտինք գտնել ։ Պէտք չէ սակայն կարծել թէ Պոլսոյ միջին ջերմութեան աստիճանը 0 ենթադրելով երկու կողմանէ ալ չափակցութիւնը կատարեալ է ։ Այնպէս կը թուի թէ մարդս աւելի կարող է դիմադրելու սաստիկ ցրտոյն քան սաստիկ ջերմութեան ։ Տանելի ցրտութեան յետին աստիճանը ջրոյ սառեցման աստիճանը պէտք էր լինել, բայց այնպէս չէ. Նախ՝ որովհետեւ նոյն իսկ պաղարիւն կենդանիք ինքնին ջերմութիւն կ'արտադրեն, երկրորդաբար, որովհետեւ կազմութեան մէջ գտնուող ջրային հեղուկները կը պարունակեն այնպիսի նիւթեր որք իրենց սառեցումը կը յապաղեն, և վերջապէս այս հեղուկները շարժում մը ունին որ նոյն ազդեցութիւնը կ'ընէ ։ Արդէն շատ ճանապարհորդներ Բեւեռային երկիրներու մէջ —10ի միջին աստիճանաւ մեծ քանակութեամբ կենդանի էակներ գտած են ։

Այս եղելութիւնը ոչինչ զարմանալի են անոնց համար որք կը հաւատան 1828 եւ 1829 տարիներուն մէջ կենդանեաց սառեցուցման վրայ Կէմսոնի ըրած փորձերուն. Խալանիոյ մէջ իւր մէկ ճանապարհորդութեան ատեն, բաց օդին դրած ըլլալով հողալից տուփ մը որոյ մէջ կային մէկ քանի գօձներ (տեսակ մը թմբակոյր գոռտ), զարմացաւ բաւական օր յետոյ տեսնելով որ գօձերը կարծրացած, դիւրաբեկ և սառած էին. հապա ո՞րչափ աւելի մեծ եղաւ իւր զարմանքն երբ տաք ջրոյ մէջ ձգելով վերակենդանացուց զանոնք ։ Սակայն այս արդէն ծանօթ էր և Ճօն Հէօնթէր նոյն ինքն այս վայրկենական կենսառացութեան նշանակութեան վրայ, բանդագուշողի և գիտնոյ երազ մը հիմնած էր. «Այնպէս երեւակայած էի թէ, կ'ըսէ, անկարելի պէտք չէր լինիլ յանհուն երկարել մարդոյ մը կեանքը, զանի խիստ ցուրտ կլիմայի մը մէջ դնելով ։ Այս դիտողութեան վրայ կը յենուի թէ, ամեն գործունէութիւն, հետեւաբար նիւթոյ ամէն նուազում պիտի դադրի մինչեւ որ մարմինը վերստին տաքնայ ։ Կը խորհէի անգամ թէ, եթէ մարդ մը իւր վերջին տասն տարիները զոհելու ըլլար այս փոփոխակի հանգստեան և գործունէութեան, կարելի պիտի լինէր նորա կեանքը երկարել մինչ հազար տարի, և թէ հարիւր տարին մի անգամ արթնցնելով պիտի կարենար գիտնալ իւր սառեցուցեալ վիճակի մէջ կատարուած ամենայն ինչ։ Ամեն ծրագիր պատրաստողներու նման, կը շարունակէ մեր երազողը, ես ալ կը յուսայի հարստանալ ասով, բայց փորձ մը պատրանքս փարատեց բոլորովին ։»

Կենդանի մը չէ կարող սառիլ առանց մեռնելու, անտարակոյս շատ մը պատճառներով բայց սա ալ միայն կը բաւէ թէ սառող ջրոյ ծաւալը կ'ընդլայնի և հետեւաբար իւր հիւսուածքը որ ջրով լի է, սառող քարի մի նման կը խորտակի. բայց կարելի է նաեւ որ անդամազննական տարբեր յօրինուածութեամբ մը գտնուին կենդանիք որք կարենան դիմադրել սառեցման ։ Զորօրինակ թէ որ ամառ ատեն գորտ մը դնենք սառի մէջ, կը սառի, որովհետեւ այս եղանակին մէջ լցուած է ջրային հիւթերով որք սառելով կը խորտակեն իւր հիւսուածքը ։ Առէք ընդհակառակը գորտ մը ձմեռուան մէջ, երբ չորցած է, երբ հիւթերով խճողեալ չէ և նոյն փորձը կրկնեցէք. գորտը ողջ կը մնայ գէթ այս տեսակ սառեցմամբ ։ Այնպէս է ամեն բանի մէջ ալ ։ Չորցած, նիհարցած ըլլալը և հիւթոց պակասութիւնը գորտի մը համար ստորնութիւն մը պիտի համարուէր ամառ ատեն, ճիշդ այնպէս ինչպէս Պոլսոյ մէջ ստորնութիւն մ'է արեան պակասութիւնը. բայց ձմեռուան մէջ ալ այս վիճակը գորտին ազատարարը կը լինի, ըստ որում կը ներէ իրեն դիմադրելու սառնամանեաց, ինչպէս Եւրոպացի մը արեան պակասութիւն ունենալը պիտի ներէր իրեն արեւադարձական երկիրներու ջերմութիւնը տանելու թէ որ այն կողմերը ճանապարհորդ էր ։

Եթէ տաք երկիրները նախնական մարդոյ համար դիցաբանական դրախտ մ'են ուր նա այնչափ հեշտութեամբ կեանք կը վարէ, նոյնը չէ ցուրտ երկիրներու համար. հոն կենաց մրցումը սաստիկ կ'ըլլայ և ընտրութիւնը (selection) վերջապէս կը ջնջէ ամենէն տկարները, ամենէն նուազ հնարագէտները, եթէ ոչ սակայն մրցակցութեան կատարեալ բացակայութիւնը հիւրատեաց երկրի մը մէջ, գայ անօգուտ ընել ամեն մրցում, որ ատեն յառաջադիմութիւնը ոչինչ է, ինչպէս քանի մը բեւեռային երկիրներու թշուառ բնակչաց համար ։

Մէկ խօսքով, միայն ջերմութեան տեսակէտէն նկատելով մոլորակիս բնակչաց ապրելու միջնավայրը, կը տեսնենք թէ դէմ մարդուս համար երկու ծայրայեղ աստիճաններն ալ անպատեհ են ընկերական յառաջադիմութեան և թէ բարեխառն երկիրներու մէջ միայն կրնայ կատարուիլ ուղեղին անսահման շրջափոխութիւնը որ զմարդ միւս կենդանիներէ վեր կը դասէ ։

Մ. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

ԻԼԱՆ

ՊԱԶԸ ՍԸՐԱՍՔԷՐԻ

Հալէպտէ պուլունան վէ պուլունտըրլաճագ օլան ասաքիրի շահանէ իչուն պիր սէնէլիք խարճլըգի իչուն միւպայեա օլունաճագ էրզագտան տախըլ չէհրտէ ալընաճագ լահմըն պէհէր գըյյէսի ճէտիտի եիւզ էլլի ալթը · վէ խարիճի չէհրտէ ալընաճագ լահմըն եիւզ եէթմիշ պիր , ալթը · երզին սէքսէն պէշ , սէքիզ · բուղտէյը սաաէնին իւչ եիւզ տօգսան · Թուզուն օթուզ իւչ · էլլի տէօրթ · զէյթուն եաղը վէ սապունըն եիւզ սէքսէն եէտի , իքի · մօմըն իքի եիւզ ալթմըշ պէշ , իքի · չէքէրին եիւզ գըրք սէքիզ , իքի · սօղան վէ հաթապըն օն տէօրթ , սէքսէն իքի · քէօմիւրին օն եէտի , տօքսան տէօրթ · կաղըն սէքսէն պէշ , սէքիզ · գուրու ֆասուլեանըն տօգսան եէտի , պէշ · զէյթունըն եիւզ պիր , տէօրթ · Նօհուտըն օթուզ իւչ , էլլի տէօրթ · սամանըն օն պէշ , ալթը փարայա թալիպի էօհտէսինտէ օլուպ աղոսթօսը բուլմիւնին եիկիրմի եէտինճի սալը կիւնի գարարը գաթիյի վիրիլէճէկինտէն իթայա թալիպ օլանլարըն լէվազըմաթ տայրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր :

3 աղօսթօս 1301

1—3

ԻԼԱՆ

ՕՐՄԱՆ ՎԷ ՄԷԱՏԻՆ ՄԷՃԼԻՍԻ

Արղնի Մատէնի հասըլաթընտան էլլի պին եէնի գըյէ խալիս պագըր Սամսուն իսքէլէսինէ նագլի թէսլիմ օլունմագ վէ էսմանը նագտէն վէ տէֆաթէն Թիճարէթ Նէզարէթը ճէլիլէսի վէզնէսինէ իթա օլունմագ շարթը իլէ պիլ միւզայետէ ֆիրուխթ օլունաճաղընտան վէ իչպու աղօսթօսըն օն իքինճի բազար էրթէսի կիւնի գարարը գաթիյի վէրիլէճէյինտէն , միւպայաասընա թալիպ օլանլարըն տէրսաատէ տէպօզիթօ վէ եա միւթէպէր քէֆիլլէրի իլէ պէրապէր Օրման վէ Մէատին մէճլիսինէ միւրաճաաթ էյլէմէլէրի իլան օլունուր :

2 Աղօսթօս 301

Քէզա

Պուլղար տաղը մատէնի հասըլաթընտան էլլի պին ճէտիտ տիրհէմ միմ վէ տէրունինտէ մեվճութ մալիմ էլ միգտար ալթուն էսմանը նագտէն Թիճարէթ Նէզարէթը ճէլիլէսի վէզնէսինէ իթա օլունմագ շարթը իլէ պիլ միւզայետէ ֆիրուխթ օլունաճաղընտան վէ իչպու Աղօսթօսըն սէքիզինճի բէնշէնպէ կիւնի գարարը գաթիյի վէրիլէճէյինտէն , միւպայաասընա թալիպ օլանլարըն եէվմի մէզքիւրէ գատար տէբօզիթօ վէ եա միւթէպէր քէֆիլլէրի իլէ պէրապէր Օրման վէ Մէատին մէճլիսինէ միւրաճաաթ էյլէմէլէրի իլան օլունուր :

2 Աղօսթօս 301

ԻԼԱՆ

ՊԱԶԸ ՍԸՐԱՍՔԷՐԻ

Նիզամիյէ թաահիյէ խարճըյէսինտէ մէվճուտ վէ միւթէրագիմ օլուպ ֆիրուխթ օլունաճագ էլլի պին գըյէ խէճէ վէ եիւզ պին գըյէ գալըն քէփէկին էսմանը նագտէն վէ բէշինէն օսմանլը լիրասը եիւզ ղուրուշա օլարագ վիրիլմէք պատէհա գալըպըյլմագ իւզրէ գալըն քէփէկին տօգուզ վէ խէճէ քէփէկին օն բարայա թալիպի էօհտէսինտէ օլուպ Աղօսթօսը բուլմիւնին սէքիզինճի բէնշէնպէ կիւնի պիլ միւզայետէ գարարը գաթիյի վէրիլէճէկինտէն վէ օնբէշ ճումա կիւնի թախսի թէքարրիւր իտէն ֆիյաթըննա եիւզտէ պէշ զամմը գապուլ խուլէճէկինտէն իշպուրայա թալիպ օլանլարըն լէվազըմաթը ումումիյէ տայրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր :

5 Աղօսթօս 1301

1—3

ԻԼԱՆ

ՊԱԶԸ ՍԸՐԱՍՔԷՐԻ

Ինչաաթը ասքէրիյէ իչուն մուգթազի օլան իւչ պին եիւզ գըյէ գաթըրանըն , եիւզ գըյէ սիճիմ տէօրթ եիւզ գըյէ պէյազ սօպօֆ հալաթը աէրտէսմը միւնագասա օլուպ աղօսթօսը բուլմիւնին եէտինճի չարշէնպէ կիւնի գարարը գաթիյի քէշիտէ օլունաճաղընտան իթայա թալիպ օլանլարըն խըթիճքեամ վէ ինշաաթ տայրէսինէ միւրաճաաթ իթմէլէրի իլան օլունուր :

5 Աղօսթօս 1301

1—2

Les vrais Fumeurs de Cigarettes doivent faire usage du JOB ou ne pas fumer!! Jean BARDOU SIGNÉ: J. Bardou et ne fabrique que cette Marque

Exploitation Générale: J. Z. PAULHAC, Toulouse

ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԵԱՅ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Թարգմանիչ
Կ. Ս. ԽՈՒԹԻՒՃԵԱՆ
Հրատարակիչք
Ն. Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ ԵՒ Ս. ՏԷՕՎԼԷԹԵԱՆ

Երրորդ հատորն՝ որ 72 մեծ և փոքր պատկերներով զարդարեալ է և 408 երեսէ կը բաղկանայ, աւարտած լինելով՝ կը վաճառուի ի գին 30 ղրուշ:

Չորրորդ հատորին բաժանորդագրութեան գինն է [illegible] 25 ղրուշ:

16 երեսէ բաղկացեալ մէն մի թերթն 30 փարայ:

Գաւառաց համար թղթատարութեան ծախքը միասին հաշուելով մէկ հատորին գինն է 30 ղրուշ:

ԼՈՒԹԸՐՍ ԵՒ ՋԻՄՆԷԼ
ՄԹԵՐԱՆՈՑ
ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ
ԳՈՐԾԵԱՑ

ՔԻՐՔՃԻ ԳԱՊՈՒՍԸ, ՂԱԼԱԹԻԱ



«ՐԻԱՆ» Մականուանեալ հնձող մեքենայն երկու ձիով կը քաշուի և կը հնձէ 300 օխա:

ԳԻՆ՝ 35 ՕՍՄ. ՈՍԿԻ Է

Մեքենային կատարելագործութիւնը երաշխաւորեալ է: Գնողն եթէ գոհ չլինի, կրնայ ետ առնուլ իր ստակն:

502

ՍԵՂԱՆԻ ԸՄՊԵԼԻ



ՑԱՐԳԵԼԻ ՀԱՅՐ ԳԷՐՄԱՆԻ

Նման «Շարթրէզ»ի գինւոյն, ախորժահամ և յոյժ առողջարար ըմպելի մ՚է և մեծապէս կը դիւրացնէ մարսողութիւնը:

Գլխաւորապէս կը գտնուի Գ. Պերթէն եղբարց քով, Ղալաթիա, Սիթէ Ֆրանսէզ:

N. 4.

Տօգթօր Փիպերին իւստալըգանը Թէժմիղլեյի ճի չէքէրլէրի չիմտիյէ գատար մալում օլան գուրու միւիլլեր չէքէրլէրին էն ալասը վէ էն էյլէնի տիր: Շուրուպլարըն իւզէրինտէ օլտուղու կիպի չէքէր գուլթուլարընըն իւզէրինտէ տախի Ֆրանսա հիւքիւմէթինին մավի տամղասը մէվճուտ օլմալը վէ գէյրինտէքի Ծիպեր վէ Գուպըն էի իմզալարը գըրմըզը միւրէքքէպլէ մուհուրլէր պուլունմալը տըր: Հէր էճզաճը վէ տրօկիսթլէրտէ պուլունուր: Տէբօսու Ղալաթա կէօմրիւքինինիւն գարշըսընտա Մ. Զէրվութինին մաղազասընտա տըր:

ԻԼԱՆ

ՊԱԶԸ ՍԸՐԱՍՔԷՐԻ

Համա—Համասա պուլունան վէ պուլունտուրուլաճագ օլան ասաքիրի շահանէ իչուն լիւզում օլան էրզագտան պէքսիմաթըն պէհէր գըյէսի ճէտիտի ալթմըշ իքի , տէօրթ · նանը ազիզին օթուզ տօգուզ , եէթմիշ սէքիզ · կուշթին եիւզ սէքսէն իւչ , իւչ · երզին եիւզ պէշ , իւչ · թուզըն գըրգ պէշ , պիր · բուղտէյը սաաէնին իւչ եիւզ տօգսան · սօղանըն օն տէօրթ , տէօրթ · սապունըն իքի եիւզ իքի , սէքիզ · մօմըն իքի եիւզ ալթը , եէտի · հաթապըն տօգուզ , օթուզ ալթը · քէօմիւրին օն պէշ , ալթը · չիւիւքին եիքիրմի տէօրթ , տօգսան · սամանըն էօն , ալթը · զէյթ վէ չէքէրին տօգսան պէշ · կաղըն սէքսէն պէշ , սէքիզ · գուրու ֆասուլեա վէ զէյթունըն տօգսան պիր , ալթը · տագիգ վէ հընթաճըն գըրգ ալթը , սէքիզ փարայա թալիպի էօհտէսինտէ օլուպ աղոսթօսը բուլմիւնին եիկիրմի եէտինճի սալը կիւնի գարարը գաթիյի վէրիլէճէկինտէն իթայա թալիպ օլանլարըն լէվազըմաթ տայրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր :

3 աղօսթօս 1301

1—3

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Գարաբետ Յովսէփ էֆէնտիի հեղինակութեամբ հայատառ և թրքաբարբառ վիպասանութիւն մը կը հրատարակի տետր առ տետր:

Այս նոր վիպասանութեան անունն է «[illegible]», այսինքն «Պատմութիւն երկու աղջկանց, կամ Ճշմարտութեան և արդարութեան յաղթութիւնը»:

Գարաբետ Յ. էֆէնտի իւր վէպին նիւթը քաղած է Պոլսոյ ներքին կեանքէ: Մինչեւ 10րդ. տետրն հրատարակուած է և կանոնաւորապէս պիտի հրատարակուին միւսներն ալ:

ՄԱԶԻ ՆԵՐԿ

Լաւագոյն տեսակը կը ծախուի Ս. Մ. Մինասեան եւ ընկերաց Ամերիկեան վաճառատան մէջ ի Ղալաթիա Բէրչէմպէ բազարի մօտ [illegible] կից:

Վերոյիշեալ ներկի գործածութեան եղանակը շատ դիւրին, արդիւնքը փայլենական ու խիստ գոհացուցիչ եւ գոյնը մնայուն ու բոլորովին բնական է: Գնողները կը վկայեն թէ ուրիշ ներկերու անմաքրութենէն ու ոմանց խիստ գարշելի հոտէն ձանձրացած ըլլալով, սկսած են գործածել այս ներկը որով շատ գոհ եղած ու նեղութենէ ազատած են, ուստի ոչ մէկ ներկ ասոր պատուականութեանը կը հասնի: Ներկի կարծրութիւն ունեցողները թող համին փորձեն: Կը ներկէ սեւ կամ շագանակագոյն, մորթը չաղտոտեր ու վնասակար նիւթ չպարունակեր:

ԾԷԼԼԱ ՍՈՏԻԱ ԴԵՂԱՐԱՆԸ

169—Պերա, մեծ փողոց—169

Իւր յաճախորդաց կը յանձնարարէ ՑԱԽԷՐԼԻՆԻ վերջին ընտիր մանագիտութիւնն,

«ՑԱԽԷՐԼԻՆ»

...մէն վստահելի միջատներու ջնջման համար: Սոյն մանագիտութիւն ազդուութեամբ, արագութեամբ և ապահովութեամբ կը գերազանցէ մինչեւ ցարդ անձեռնեալ ճանչուած միջատասպան փոշիները կամ որ և է դարմաններն ընդդէմ

ՄԼՈՒԿՆԵՐՈՒ, ԼՈՒԵՐՈՒ, ՃԱՆՃԵՐՈՒ ՈՋԻԼՆԵՐՈՒ, ՄՐՋԻՒՆՆԵՐՈՒ

և այլ այս տեսակ միջատներու դէմ ճճիներու:

Մանաւանդ պէտք չէ շփոթել

ՑԱԽԷՐԼԻՆ

հասարակ միջատասպան փոշիին հետ: ՑԱԽԷՐԼԻՆԸ միմիայն շիշերով կը ծախուի, և երբէք բաց թղթով կամ կշիռով: Ճշմարիտ շիշերը կը կրեն ստորագրութիւնը գործարանին Ն...

J. Zacherl

Կը ծախուի Ղալաթիա, Քասթօրիտէսի դեղարանը:
Պ--- Նաւամատոյցը:
Հէյպէլի, Թոմասիս դեղարանը:
Մեծ կղզի:

ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՓԱՐԻԶԻ

«ԲՈՒԿԻ կապոյն, երկաթախառն, կազդուրիչ հանքաջուրերն են միակ ամենադգու և [illegible]: Կը ներգործեն այն մեծ պաշտօններն որք մարսողութեան գլխաւոր գործողութիւնը կը կազմեն»:

Պրոֆ. «ՐՈՒՍՕ»

POUGUES

ԲՈՒԿԻ կալքարային, երկաթախառն, կազդուրիչ և ախորժաբեր Ջուրերն իրենց մասնաւոր բաղադրութեան կը պարտին իրենց յաջողութիւնն եւ առանձնաշնորհեալ ջրոց մէջ դասակարգութիւնը: Այս Ջուրերն, [illegible], կը պարունակեն իբր 5 կրամ [illegible]: Այդ աղերուն մէջ ամենէն առատներն են [illegible], որով [illegible] կը տարբերին Ֆրանսայի միւս կալքարային աղբիւրներէն որք մասնաւորապէս սոտայի և [illegible] աղեր կը պարունակեն:

Այդ հանքաջուրերը կը ներգործեն մանաւանդ ստամոքսէն աղիքը սանող փողին վրայ՝ զոր թեթեւ մը գրգռեն, չէզոքացընելով միանգամայն թթուն որ կրնայ գտնել հոն, եւ միւսկան ու ծննդական գործարանաց վրայ, որոց տկարացեալ ոյժերը կը վերանորոգեն:

Անոնց գործածութեամբ, [illegible] կը վերծանի այն ամեն կամերէ որք կ՚արգելուին զինքն թէ՛ ստամոքսին և թէ՛ աղեաց մէջ:

Այս առաջին արդիւնքը բնականաբար յառաջ կը բերէ [illegible], որովհետեւ կենաց ոյժերն համեմատական են մարսողական գործարանաց մէջ կատարուող վերանորոգիչ աշխատութեան: Ադէկ կը հետեւի թէ ընդհատական ջերմերէ յառաջ եկած [illegible] եւ [illegible] հիւանդները կը բուժին ԲՈՒԿԻ հանքաջուրերով, մանաւանդ որ անոնց բուժիչ գործողութիւնն նոր տարր մը կ՚առնու [illegible] կը պարունակեն:

ԲՈՒԿԻ հանքաջուրերը կը ծախուին, ՃԻՕՎԱՆՆԻ ԱԼԻՊՐԱՆՏԻ ԸՆԿ. գործակալութիւնը, Դեղարան Տէլլա-Սոտիա, Պերա, Մեծ փողոց:

510 ՊՈԼԻՍ

ԳՈՒԻՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ

ՌԸԼԻՆՍ

Ծովային ապահովագրութիւն: —Դիմել առ Ժ. Վ. Ուիլթըլ, Նօրկիւտաւս խան Պահչէ-գաբու, Գալաթա կամ Պոլսոյ Ալէքսիաստի խան թիւ 15:

507

ԲԱԲԱՅԱՆԻ

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվրբուլէ, Մէյթէրրանէի գիծ կանոնաւորաբար բանող

ՇՈԳԵՆԱՒՔ

Անուանք	Թոնօ	Նաւապետք
Այա Սոֆիա	3,000	Պրքօ
Ալպանիա	2,500	Ռոճըրս
Ալճերիա	2,500	Քրուիքշանք
Լաքոնիա	2,500	Ռէյգս
Մասէտոնիա	3,500	Մարշ
Ռումէլիա	2,800	Ֆօթըրկիլ

Պըէրռիէօ շոգենաւն ի մօտոյ Լիվրբուլ պիտի մեկնի:

Այա Սոֆիա շոգենաւն ամսոյս 24ին Լիվրբուլէն աստ կ՚սպասուի:

Ընկերութիւնն օրինաւոր գներով վաճառք կ՚ընդունի Եւրոպական երկիրներու և Ամերիկայի համար:

Ամեն դիւրութիւն և հանգստութիւն կը տրուին ուղեւորաց:

Դիմել առ ԴԱՆԻԷԼ, ՌՕԲՍ ԵՒ ԸՆԿ.
Գործակալք

513

ՔԻՒՆԱՐՏ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Որք ամեն շաբաթ կանոնաւոր կը բանին Լիվրբուլէ և Մէյթէրրանէի գիծ.

Անուանք	Թոնօ	Անուանք	Թոնօ
Սերվիա	7,000	Մալթա	3,000
Աթլաս	3,000	Մորոքքօ	2,500
Ալեբբօ	3,000	Հէքլա	2,500
Պոթնիա	4,600	Բաւոնիա	5,000
Պալպէք	2,500	Պալմիրա	3,000
Պրիթիշ Քուին	1,200	Ումպրիա	7,800
Սեֆալոնիա	5,000	Սքիթիա	4,600
Քադալոնիա	4,700	Սարակոսա	3,000
Շէրպուրկ	2,000	Սամարիա	3,000
[illegible]	2,500	Սիտոն	3,000
Կալլիա	4,000	Թարիֆա	3,000
Քէտար	2,500	Թրինիտատ	2,500
Մարաթոն	3,000		

Սերվիա շոգենաւն ամսոյս 18ին Լիվրբուլէն աստ կ՚սպասուի ընդհանուր վաճառքով:

Ստորագրեալն պատրաստ է ուղեւորներ և վաճառք ընդունիլ Նիւ-Եորքի, Պոսթընի, կամ Ամերիկայի և Գանատայի ուրիշ ոևէ նաւահանգստի համար:

Դիմել առ ԹՈՄԱՍ Զ. ՃՕԼԻ
Գործակատար
Թիւ 1 Քիւչիւք Հայիլ փաշա խան Ղալաթիա

511

ՄԻՋԱՏԱՍՊԱՆ ՃՇՄԱՐԻՏ ՓՈՇԻ

ԾԽՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

Ա. ՄԻԹԱԼՈՎԻՉԻ

ԻՍԹՈՒԼԻՕ, ԴԱԼՄԱՏԻԱ

Ղալաթիոյ մէջ Մթերանոցն է Մոմհանէ, Լոյտ խան, 2.

ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվրբուլէ և Մէյթէրրանէի գիծ բանող շոգենաւք

Անուանք	Թոնօ	Անուանք	Թոնօ
Քանոբուս	4200	Օսայրիս	3000
Ֆէրոս	4000	Նէֆթիս	3000
Օսմանլի	4000	Բերա	3000
Սեսոստրիս	3250	[illegible]	1700
Թիպա	3250	Լօտիա	800
Մակտալա	3250	Օլինտա	800
Մարիոթիս	3250	Սեյլ	700

Բերա շոգենաւը, Նաւապետ Ֆօրխըթըր աստ հասաւ և բեռ կ՚առնու Լիվրբուլի համար:

[illegible] շոգենաւն ամսոյս 12 Լիվրբուլէն աստ կ՚սպասուի ընդհանուր վաճառքով:

Դիմել առ Ժ. Թ. ՈՒԻԹՈԼ և ԸՆԿ.
Մէյտանճըգ փողոց,
Ուիթօլ խան
ՃԵՅՄՍ ՄՈՍ և ԸՆԿ.
31, Ճէյմս Սթրիթ, Լիվրբուլ

515

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՈՒՑ

Ընդ մէջ Անգլիոյ, Կ. Պոլսոյ և Օտեսայի

ԹՈՎՄԱՍ ՈՒԻԼՍԸՆ ՈՐԴԻՔ ԵՒ ԸՆԿ.

Անուանք	Թոնօ	Անուանք	Թոնօ
Ալպանօ	2,000	Լերանտօ	4,500
Անճէլօ	3,000	Մարէնկօ	4,300
Արկօ	1,300	Մարստոն	2,500
Պասսանօ	3,500	Միլօ	2,000
Պորոտինօ	2,200	Նէրօ	2,000
Պրաւօ	2,000	Օթէլլօ	5,000
Գէլրա	2,600	Օրլանտօ	3,000
Գալիբսօ	2,500	Օդրանտօ	4,500
Գամէօ	2,400	Օդօ	2,000
Գադօ	2,000	Բասիֆիք	1,200
Գօմօ	2,700	Բալէրմօ	3,200
Տիտօ	2,500	Բաստէր	1,700
Տօմինօ	1,800	Փիդօ	2,800
Էրասօ	2,600	Րիալթօ	4,400
Տրաւօ	2,600	Րինալտօ	3,200
Ֆալքօն	800	Րոլլօ	3,000
Ֆիտօ	1,700	Րոմանօ	5,500
Ֆլամինկօ	1,600	Րոմէօ	3,500
Կալիլէօ	5,500	Սալէրնօ	4,000
Կիդամօ	2,200	Սափֆօ	2,000
Կոդօ	1,800	Սիլվիօ	2,000
Կրօտօ	2,200	Սորէնտօ	4,300
Հանկօ		Թասսօ	1,200
Հէրօ	2,000	Թ. Ուիլսըն	3,000
Հիտալկօ	3,000	Թիկէր	1,300
Հիւմպէր	1,200	Թոլէտօ	2,800
Ճիսօ	2,300	Ուանտօ	3,600
Քէլսօ	2,000	Ւէտտօ	1600
Քոզմօ	2,200	Զէպրա	3,000
Լէօ	2,000	Զէրօ	41,0

Րինալտօ շոգենաւը, նաւապետ Նիւմէն ամսոյս 3ին Հուլէն մեկնած է Մալթա, Զմիւռնիա, Կ. Պոլիս և Օտեսա երթալու համար: Ամսոյս 22ին աստ կ՚սպասուի:

Քոզմօ շոգենաւը, նաւապետ Նիլ, ընդհանուր վաճառքով այժմ կը բեռնաւորի ի Հուլ, և ամսոյս 21ին պիտի մեկնի ի Պոլիս Օտեսա երթալու համար:

Ուղեւորներու համար ամեն դիւրութիւն կ՚ընծայուի.

Աւելի մանրամասնութեանց համար դիմել առ ՖՐԷՏԷՐԻՔ ՀԻԼՏ ԻՆ ԸՆԿ.
Գործակալք
Թիւ 17-18, Քիւչիւք Միլլէթ խան Ղալաթիա

514

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՄԱՐՈՔԵԱՆ
Ն. ՓԱՔԷ ԵՒ ԸՆԿ.

Մարսիլեայէ և Բօնթի գիծ կանոնաւորաբար բանող

Սամսոն, Տրապիզոն և Բաթում երթալիք յառաջիկայ շոգենաւն է [illegible] որ օգոստ. 12ին Մարսիլիայէն և օգոստոս 29ին Պոլսէն պիտի մեկնի:

Մարսիլիա երթալիք յառաջիկայ շոգենաւն է Լը [illegible] որ պիտի մեկնի օգոստ. 27ին:

Լ՚[illegible] պիտի մեկնի օգոստոս 15ին ուղղակի Լը Հավր:

Ուղեւորներու բոլոր դիւրութիւններ

Նաւուղեւորի, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար

Դիմել առ գործակատարն
ԹԻՆԻՒԹԻՒ ՐԸՓՈՒԼ
Թիւ 17-18 Քիւչիւք Միլլէթ
Մոմհանէ փողոց, թիւ 141

514

ՖՐԷՏ ԼԷՅԼԱՆՏ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Որք կանոնաւորաբար կը բանին Լիվրբուլէ և [illegible] գիծ.

Անուանք	Թոնօ	Անուանք	Թոնօ
Ալճէրիան	2500	Ֆավոնեան	3700
Ալզերիան	2500	Ֆլամինեան	3700
Անտալուզեան	2500	Ֆլավեան	3700
Աթենեան	2500	Իպերիան	5500
Արապիան	3700	Իլլիրեան	5500
Պաւարիան	6000	Իսդրիան	5500
Պուլկարիան	6000	Լեսպիան	2200
Քասթիլեան	800	Լիկուրեան	2500
Սայրենեան	2000	Լիսպոն	800
Տուրոյ	700	Օրթիկիա	700
Էճիպշըն	3700	Բերսիան	3800
Ֆապիան	3700	Վալէնսիան	6800
Ֆալերնիան	3700	Վիրճինեան	6800

Ֆլավեան շոգենաւը, Նաւապետ Ֆրայ, օգոստոս 18ին Լիվրբուլ պիտի ուղեւորի Զմիւռնիոյ ճամբով:

Ուղեւորներու համար ամեն դիւրութիւն կ՚ընծայուի.

Աւելի մանրամասնութեանց համար դիմել առ ԷՏՈՒԱՐՏ ԼԱՖՈՆԹԷՆ
Գործակալ
Թիւ 34, 35, 36, Եէնի Միլլէթ խան, Ղալաթիա.

Նաւատէրք, Պարոնայք Ֆրէտ, Լէյլանտ և ընկ. Լիվրբուլ

Գործակալութիւնք
Կ. Պոլիս, Էտուարտ Լաֆոնթէն.
Ճիպրալթար, Գ. Գ. Քարվըր Եղբարք.
Աղեքսանդրիա, Կ. Լ. Վահման և ընկ.
Մալթա, Ա. Քամիլլերի.
Շիրա, Ա. Մ. Մավրոկորտադոյ.
Զմիւռնիա, Գ. Ուիդոլ և ընկ.

512

Պատասխանատու Մ. ՉԱՄՈՒՐՃԵԱՆ

ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐԻՅԷԻ

ՇՈԳԵՆԱՒՈՒՑ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԵԱՆ ՑՈՒՑԱԿԸ

1885 Օգոստ. 1 Հինգշաբթի օրէն սկսեալ մինչև Օգոստ. 31

(Բաց ի կիրակի օրերէն) Եւրոպական եզերքէն կամուրջ իջնող շոգենաւոց երթեւեկութեան ժամերը

Ժ. Թ.

)11 30 Եէնիմ. Մէզարպ. Պէօյիւք. Թարապ. Եէնիք. (Եէնիք. շոգենաւին հետ պիտի հաղորդակցի) 32
)12 5 Եէնիք. Ըսթէն. Միրկ. Պօյաճ. Ռ. Հիսար Պէպ. (Առնաւ. շոգենաւին հետ պիտի հաղորդակցի) 22
)12 30 Ռ. և Ա. Գավ. Եէնիմ. Մէզարպ. Պէօյ. Քիրէճ. Թար. Եէնիք. (Եէնիք. շոգենաւին հետ պիտի հաղորդակցի) (Ուրբաթ օրերը Իսթէնիա Միրկէօն Ռ. Հիսար Պէպէք) 18
) 1 20 Եէնիք. Ըսթէն. Միրկ. Պօյաճ. Ռ. Հիսար Պէպ. (Առնաւ. շոգենաւին հետ պիտի հաղորդակցի) (Ուրբաթ օրերը չպիտի հաղորդակցի) 28
) 1 45 Եէնիմ. Մէզարպ. Պէօյ. Թար. Եէնիք. (Եէնիք. շոգենաւին հետ պիտի հաղորդակցի) 17
) 2 20 Եէնիք. Ըսթէն. Միրկ. Պօյաճ. Ռ. Հիսար Պէպ. (պիտի հաղորդակցի) 21
3 — Եէնիմ. Մէզարպ. Պէօյիւք. Քիրէճպ. Թարապ. Եէնիք. Ըսթէն. Միրկ. Պօյաճ. Ռ. Հիսար Պէպ. (Առնաւուտ գիւղ պիտի հաղորդակցի) 33
4 — Ա. Գավաք. Եէնիմ. Մէզարպ. Պէօյ. Թար. Եէնիք. Ըսթէն. Միրկ. Պօյաճ. Ռ. Հիսար. Պէպէք. Առնավ. Գուրուչ. Օրթաք. Պէշիք. 18
5 15 Եէն. Մէզ. Պէօյ. Թար. Եէնիք. Միրկ. Ռ. Հիսար Պէպ. Առնավ. Գուրուչ. Օրթ. Պէշ. 25
6 15 Եէնիմ. Մէզարպ. Պէօյիւք. Թարապ. Պէյգօզ Բաշպաղ. Եէնիք. Միրկ. Գանլըճ. Ռ. Ա. Հիսար Գանտիլ. Առնավ. Չէնկ. Պէյլէր. Օրթաք. Գուզ. Պէշիք. Իւսկ. 1
8 15 Ա. և Ռ. Գավ. Եէնիմ. Մէզարպ. Պէօյ. Թարապ. Եէնիք. Միրկ. Պօյաճ. Ռ. Հիսար Պէպ. Առնավ. Գուրուչ. Օրթաք. Պէշիք. (ուրբաթ օրերը Իսթէնիա պիտի հանդիպի) 34
10 — Մէզարպ. Պէօյ. Թարապ. Եէնիք. Միրկ. Ռ. Հիսար Առնավ. Օրթաք. Պէշիք. 28

Առնավուտքէօյէն կամուրջ իջնող շոգենաւոց ժամերը

)11 30 Պէպ. Առնավ. Գուրուչ. Օրթ. Պէշիք. 20
)12 10 Առնավ. Գուրուչ. Օրթ. Պէշիք. Գապ. 1
)12 40 Պէպէք Առնավ. Գուրուչ. Օրթաք. Պէշիք. 21
) 1 20 Առնավ. Գուրուչ. Օրթ. Պէշիք. Գապ. 4
) 1 55 Պէպէք Առնավ. Գուրուչ. Օրթաք. Պէշիք. 25
) 2 55 Պէպ. Առնավ. Գուրուչ. Օրթ. Պէշիք. Գապաթ. 4
4 — Պէպ. Առնավ. Գուր. Օրթաք. Պէշիք. Գապաթ. 17
10 45 Հիսարէն Չէնկէլքէօյ 22
11 10 Պէպէքէն ուղղակի կամուրջ 1

Ասիական եզերքէն կամուրջ իջնող շոգենաւոց ժամերը

)11 15 Վանիք. Չէնկ. Պէյ. Գուզկ. Գապաթ. 28
)11 40 Պէյգ. Բաշպ. Ռ. Բ. Մահ. Գանլըճ. Ա. Հիսար Գանտ. (Գանտիլլիի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի) 25
)12 15 Գանտիլ. Վանիք. Չէնկէլ. Պէյլէրպ. Գուզկ. 33
) 1 15 Գանտ. Վանիք. Չէնկէլ. Պէյլէր. Գուզկ. 32
) 1 30 Պէօյ. Թար. Պէյ. Բաշ. Ռ. Բաշպ. Գանլըճ. Ա. Հիսար Գանտիլ. (Գանտ. շոգենաւին հետ պիտի հաղորդակցի) 34
) 2 [illegible]0 Գանտիլ. Վանիք. Չէնկ. Պէյլ. Գուզկ. Իւսկ. 22
) 2 45 Մէզար. Պէօյիւք. Թարապ. Պէյգօզ Բ. Պահճէ Գանլըճ. Ա. Հիսար Գանտ. Վանիք. Չէնկ. Պէյլ. Գուզկ. Պէշիք. 20
4 — Պէյգօզ Բաշպաղ. Իւֆթալի բաշը Գանլըճ. Ա. Հիսար Գանտ. Վանիք. Չէնկք. Պէյլ. Գուզկ. Իւսկ. (Ուրբաթ օրեր ժմ. 4 15 Մէզարպուրնուէն պիտի ելլէ) 32
8 45 Պէօյիւք. Թարապ. Պէյգ. Բաշպ. Գանլըճ. Ա. Հիսար Գանտիլ. Վանիք. Չէնկէլ. Պէյլէր. Գուզկ. Իւսկիւտար (Ուրբաթ օրերը Ռ. Բ. Մահ.) 21
10 25 Գանտիլլիէն ուղղակի կամուրջ 25

(Բաց ի կիրակի օրերէն) կամուրջէն Եւրոպական եզերք երթեւեկող շոգենաւոց ժամերը

)12 30 Պէշիք. Օրթ. Գուրուչ. Առնավ. Պէպէք Ռ. Հիսար Միրկ. Եէնիք. Թարապ Պէօյիւք. Մէզարպ. 20
) 1 15 Պէշիք. Օրթա. Գուր. Առնավ. Պէպէք Ռ. Հիսար Պօյաճ. Իսթէն. Եէնի. Թար. Պէօյ. Մէզարպ. Եէնիմ. 33
1 45 Գապաթ. Իւսկ. Պէշիք. Գուզկ. Օրթ. Պէյլէր. Չէնկէլ. Առնավ. Գանտիլ. Ա. և Ռ. Հիսար Գանլըճ. Միրկ. Եէնիք. Բաշպաղ. Պէյգ. Թարապ. Պէօյ. Մէզ. Եէնիմ. 1
2 15 Պէշիք. Օրթա. Առնավ. Ռ. Հիսար Միրկ. Եէնիք. Թարապ. Պէօյիւք. Մէզարպ. Եէնիմ. Ռ. և Ա. Գավագ. 18
3 30 Պէշիք. Օրթաք. Պէյլ. Առնավ. Գանտ. Ռ. Հիսար Գանլըճ. Միրկ. Եէնիք. Թարապ. Պէօյիւք. Մէզարպ. Եէնի. 25
5 — Գապաթ. Պէշիք. Օրթաք. Գուրուչ. Առնավ. Պէպէք. Ռ. Հիսար Պօյաճ. Եմիրկ. Իսթէն. Եէնիք. Պէյգ. Թարապ. Պէօյիւք. Մէզր Եէնիմ. և Գավագներ 34
6 45 Իւսկ. Պէշիք. Գուզկ. Օրթ. Պէյլէր. Չէնկ. Առնավ. Գանտիլ. Ա. և Ռ. Հիսար Գանլըճ. Միրկ. Եէնիք. Թարապ. Պէօյ. 21
8 15 Պէշիք. Օրթ. Առնավ. Պէպ. Ռ. Հիսար Միրկ. Եէնիք. Թարապ. Պէօյ. Մէզար. 28
10 — Եէնիք. Թարապ. Պէօյ. Մէզար. Եէնի. (Ուրբաթ օրերը ժամը 9 45ին) 18
10 30 Ռ. Հիսար Պօյաճ. Միրկ. Իսթէն. Եէնիք. Թար. Քիրէճպ. Պէօյի. Մէզար. Եէնիմ. 17
11 10 Եէնիք. Թարապ. Պէօյիւք. Մէզարպ. Եէնիմ. 34
11 30 Պէպ. Ռ. Հիսար Պօյաճ. Միրկ. Իսթէն. Եէնիք. 22

ԻՒՍԿԻՒՏԱՐ ԵՐԹԵՒԵԿՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐ

Իւսկիւտարէն	Կամուրջ	Կամուրջէն	Իւսկիւտար
— —	5 45	— —	6 — Պէշիք.
11 30	6 15	11 50	7 —
12 —	7 —	12 15	8 15
12 30	8 10 Պէշիք	12 45	9 — Պէշիք
1 —	8 55	1 20	9 35
1 30	9 45	1 45	10 5 Պէշիք
2 —	10 — Պէշիք	2 15	10 30 Գզ. *
2 30	10 30	2 50	11 —
3 15	10 50 Պշ Գզ	3 35	11 25
3 45	11 20	4 5 Պէշիք	11 50
4 20 Պէշիք	11 40 *	4 45	12 5
5 —	12 5	5 30	12 5 Պշ Գզ*

ԿԻՐԱԿԻ ԵՒ ՈՒՐԲԱԹ ՕՐԵՐ

Իւսկիւտարէն	Կամուրջ	Կամուրջէն	Իւսկիւտար
11 15	5 40	11 15	5 30
12 —	6 15	12 —	6 10 Պէշիք
12 30	7 —	12 25	7 —
1 —	8 10 Պէշիք	12 55	8 15
1 30	8 45	1 25	9 — Պէշիք
2 —	9 30	1 55	9 35
2 30	9 55 Պէշիք	2 25	10 — Պէշիք
3 —	10 25	2 55	10 35
3 30	11 —	3 25 Պէշիք	11 15
4 15 Պէշիք	11 35	3 55	11 50
5 —	12 5	4 45	12 5

(*) Այս շոգենաւք Հրեից տօներուն և ուրբաթ և շաբաթ օրերը չպիտի երթեւեկեն:

) Այս նշանը կրող շոգենաւք Օգոստոս 17էն սկսեալ մէկ քառորդ ժամ յառաջ պիտի մեկնին:

Կամուրջէն Առնավուտքէօյ երթեւեկող շոգենաւոց ժամերը

)12 45 Ուղղակի Առնավուտքէօյ 4
) 1 20 Ուղղակի Պէպէք 25
) 2 20 Ուղղակի Պէպէք 4
3 25 Ուղղակի Պէպէք 17
9 50 Պէշիք. Օրթ. Գուրուչ. Առնավ. Պէպ. Ռ. Հիսար (Վաշփօր [illegible] շոգենաւին հետ պիտի հաղորդակցի) 22
10 25 Պէշիք. Օրթ. Գուրուչ. Առնավ. Պէպ. 1
11 5 Գապաթ. Պէշիք. Օրթաք. Գուրուչ. Առնավ. Պէպ. (Եէնիքէօյի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի) 21
11 45 Պէշիք. Օրթ. Գուրու. Առնավ. Պէպ. 28
12 — Օրթ. Գուրուչ. Առնավ. (ուրբաթ և շաբաթ օրերը Պէշիկթաշ) 1

Կամուրջէն Ասիական եզերք երթեւեկող շոգենաւոց ժամերը

)12 5 Իւսկ. Գուզկ. Պէյլէ. Չէնկ. Ա. Հիսար Պէյգ. Եէնիք. (Ուրբաթ օրերէ զատ) 28
)12 45 Ուղղակի Գանտիլլի 32
)12 55 Իւսկ. Գուզկ. Պէյլպ. Չէնկլք. Վանիք. Ա. Հիսար. Գանլըճ. Բաշպաղ. Պէյգ. Եէնիք 21
) 1 55 Ուղղակի Գանտիլլի: 22
2 30 Իւսկ. Գուզկ. Պէյլէր. Չէնկ. Վանիք. Գանտիլ. Ա. Հիսար Գանլըճ. Բաշպաղ. Պէյգ. (Ուրբաթ օրերը Ռ. Բ. Մահ. և Մէզարպ.) 32
9 25 Գապաթ. Պէշիք. Գուզ. Պէյլէր. Չէնկէլ. Վանիք. Գանտիլ. (Գավագներ գացող շոգենաւին հետ պիտի հաղորդակցի) 25
10 15 Գանտ. Ա. Հիսար Գանլ. Ռ. Բ. Մահ. Բաշպաղ. Պէյգ. Թար. Մէզարպ. Գավագներ 32
10 40 Պէշիք. Գուզկ. Պէյլէր. Չէնկէլ. Վանիքէօյ Գանտիլլի (Գանտիլլիի նաւամատոյցը Պէյգօզի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի) 33
11 10 Գանտիլ. Ա. Հիսար Գանլըճ. Բիւֆթալի. Բաշպաղ. Պէյգ. 25
11 40 Գապաթ. Գուզ. Պէյլ. Չէնկ. Վանիք. 20

ՀԱՐԷՄ ԻՍԿԷԼԷՍԻ ԵՐԹԵՒԵԿՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐ

ԲԱՑ Ի ՈՒՐԲԱԹ ՕՐԵՐԷՆ

1 20 Հարէմէն Սալաճագ (բաց ի կիրակի օրերէն)
4 — » »
10 45 » »
11 35 » » (կիրակի օրեր . 11ին)
1 — կամուրջէն Հարէմ Սալաճագ (բաց ի կիրակի օրերէն)
3 40 կամուրջէն Հարէմ անտի Սալաճագ
10 30 կամուրջէն Հարէմ անտի Սալաճագ (բաց ի կիրակի օրերէն)
11 20 կամուրջէն Հարէմ անտի Սալաճագ (կիրակի օրերը ժմ. 10 45ին):

ԻՒՍԿԻՒՏԱՐ ՍԻՐՔԷՃԻ ԻՍԿԷԼԷԻ ԵՒ ԳԱՊԱԹԱՇԻ ՄԻՋԵՒ ԿԱՌԱԲԱՐՁ ՇՈԳԵՆԱՒՈՒՑ ԵՐԹԵՒԵԿԻ ԺԱՄԵՐԸ

3 30 Իւսկիւտարէն Գապաթաշ Սիրքէճի
4 45 Իւսկիւտարէն Սիրքէճի .
10 — Իւսկիւտարէն Սիրքէճի
11 — Իւսկիւտարէն Գապաթաշ
4 15 Սիրքէճիէն Իւսկիւտար
5 30 Սիրքէճիէն Գապաթաշ Իւսկիւտար
10 30 Սիրքէճիէն Իւսկիւտար
11 15 Գապաթաշէն Իւսկիւտար

Նշան. —Որ միգապատ եղած ատեն, շոգենաւք իրենց գտնուած տեղը պիտի մնան:

Ուրբաթ օրերը ժամ 4ին կամուրջէն մեկնելով Իւսկ. Գուզկ. Պէյլ. Չէնկէլ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար Գանլըճ. Բիւֆթալի. Բաշպաղ. Պէյգօզ Թարապիա Պէօյի քտէրէ Մէզարպուրնու Եէնիմահալլէ պիտի երթայ և անտի ժամը 10 45ին մեկնելով և յիշեալ նաւամատոյցները հանդիպելով կամուրջ պիտի վերադառնայ:

Ուրբաթ իրիկուններ ժամ 1, 15ին Եէնիմահալլէն շոգենաւ մը ելնելով պիտի հանդիպի Մէզարպուրնու, Պէօյիւք. Թարապ. Եէնիք. Միրկէօն, Ռում. Հիսար, Առնավուտ. Օրթ. Պէշիք. և անտի կամուրջ: